

Մշակութային և Հասարակական  
Երկչարաբարերը

# Յոյն

1200 թուման  
Հայաստանում 320 դրամ



# ԻՆՉՈՒ ԱՅՐԵՑԻՆ

## «ԱՅՐԻՈՂ ԱՅԳԵՍՏԱՆՆԵՐ»-Ը

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Մշակութային և Հասարակական  
**Յոյս**  
 Երկշաբաթաթերթ  
 Ե սարի, քի107, Սեպտեմբեր 28, 2011,  
 1200 րուման  
 Հայաստանում 320 դրամ

- 2 **Հայաստանի հանրապետության 20-ամեակը**
- 4 **ՀԱԿ-ի հանրահալաքը երեւանում**  
Անուշ Մարտիրոսեան
- 5 **ՀՀ նախագահի ելոյթը ՄԱԿ-ում**
- 6 **«Այանդէնեգար» թերթի հարցազրոյցը**  
Լեւոն Ահարոնեանի հետ
- 17 **Թէ ինչ սովորեցի ստացած քաղցկեղի վախից**  
Գոկտ. Մեմենթ Ծգ
- 22 **Ստրուկները չեն կառուցել եգիպտոսի**  
բուրգերը
- 24 **43-րդ համահայկական խաղերը Թեհրանում**  
Արման Տէր Ստեփանեան
- 27 **Ժամանց**



- 8 **Գուրգէն Մահարու Գողգոթան**
- 8 **Ինչու այրեցին «Այրուղ Այգեստանները»**  
Ռոբերթ Սաֆարեան
- 9 **Վեպի պատումային թելերը եւ կերպարները**
- 10 **Ազգը գրողի դէմ**  
Մարկ Նշանեան
- 12 **Մահարու վերջին կարուսեղը**  
Գրիգոր Աճեմեան
- 14 **Հատուած վեպից**

## Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

- |   |   |    |   |   |
|---|---|----|---|---|
| 2 | <b>Այս համարի հայերէն էջերում</b>                                     | 9  | <b>Հարցազրոյց Այիդա Սարգսեանի հետ</b>                 | <b>Եկեղեցիների բարեկամութեան համար Յովիկ Մինասեան</b> |
| 4 | <b>ՀՀ արտգործնախարարի այցը Թեհրան</b>                                 | 11 | <b>Հայ լուսանկարիչներ՝ Անդրանիկ Քոչար</b>             |   |
| 6 | <b>Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքը եւ Հայաստանը</b><br>Սուրադ Օհանեան | 13 | <b>Յակոբ Մողոյեան՝ հայ առաքելական եւ աւետարանական</b> |   |

### Յոյս

Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ

Արտօճատէր՝  
Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝  
Ռոբերթ Սաֆարեան

#### Խմբագրական կազմ՝

Քարմէն Ազարեան,  
Լիա Խաչիկեան,  
Գարուն Սարգսեան,  
Արմինէ Մելիք-Իսրայելեան

Գեղարուեստական ձեւաւորում՝  
Լիա Խաչիկեան

Հայերէն բաժնի սրբագրիչ՝  
Քարմէն Ազարեան

Կայք  
Քաջիկ Սաֆարեան

Մարզական  
Արման Ստեփանեան

Բաժանորդագրութիւն  
Քաթրին Եաղուբի

Հասցէ՝  
Թեհրան, Էնդելար պողոտայ,  
Վալի Ասր քառուղի  
համար 1048  
66495180 66492693

Հեռախօս-հեռապատճեն՝  
66495208

hooyes@inbox.com  
www.hooyes.com

# ՇՆՈՐՀԱԻՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ

Սեպտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետությունը բոլորեց իր քսան տարին: Սփիռքում եւ Հայաստանում մեծ շուքով ու բազմաթիւ ձեռնարկներով նշեց Հանրապետութեան 20-ամեակը: Դարերի ընթացքում, իրենց ինքնութեան գիտակցութեան հասած մարդկային խմբերը բնականաբար ձգտում են հիմնադրել իրենց ազգային պետութիւնը: Հայերը, որպէս այդպիսի գիտակցութեան տէր ժողովուրդ, դարեր շարունակ ապրել էին օսմանական, ռուսական եւ պարսկական կայսրութիւնների սահմաններում՝ զուրկ սեփական պետականութիւնից: Անցեալ դարի սկզբներին, առաջին աշխարհամարտի յետօրէին, առիթ ստեղծեց արեւելեան Հայաստանի տարածքում հռչակել անկախ պետութիւն, որը զոյատեւեց միայն երկու տարի: Կրկին անգամ հայկական անկախ հանրապետութեան հռչակման առիթ ստեղծեց 1991 թւականին Խորհրդային միութեան փլուզումից յետոյ, որի արդիւնքն է այսօրայ հայկական պետութիւնը: Անցեալ քսան տարիները Հայաստանի Հանրապետութեան համար եղել են փորձի եւ հասունացման տարիներ: Հայաստանի Հանրապետութեան 20-ամեակի առիթով հայաստանեան մամուլը անդրադարձել է անցեալ երկու տասնամեակների ձեռքբերումներին ու թերութիւններին:

## Հայաստանեան մամուլը՝ ՀՀ անկախութեան 20-ամեակի մասին



Հայաստանեան մամուլի խմբագրականներն այսօր նւիրած են ՀՀ անկախութեան 20-ամեակին: Թերթերը նշում են ինչպէս անկախ Հայաստանի ձեռքբե-

րումների, այնպէս էլ բացթողումների ու սխալների մասին:

«Առաւօտ»-ի խմբագիրը գրում է. «Ինչպէ՞ս կընկալւէր առաջին եւ երկրորդ նախագահների որոշու-

մը՝ մասնակցել տօնական միջոցառումներին: Բնականաբար, տարբեր ձեւով: Գուցէ թունդ ընդդիմադիրները դրանից հիասթափւէին: Գուցէ չարախօսներն ու



բամբաստողներն ուրախանային՝ «բա որ ասում էինք, որ նրանց միջեւ ախպերութիւն կայ»: Բայց պետական աւանդոյթները ստեղծուում են ոչ թէ այսօրւայ հասարակական ընկալումների համար, այլ հակառակը՝ որպէսզի մարդիկ դուրս գան այսօրւայ թայֆայական-կենցաղային կարծրատիպերից: Այսինքն՝ որ անկախութեան 30-ամեակի առիթով կազմակերպւած շքերթի ժամանակ նրանք մտքում ասեն՝ մեր զօրքերը, մեր տանկերը, մեր նախագահները»:

«Ազգ»-ի գրում է. «Ծնել ու մեծացել է նոր սերունդը՝ 20 տարեկանների, անկախութեան տարեկիցների, ով այլ բան չի տեսել ու չի պատկերացնում, քան անկախութիւնը, անկախ Հայաստանի քաղաքացի լինելու փաստը: Ուրիշ բան, որ այդ ընկալմանը զուգահեռ, նա տիրոջ իրաւունքով, կարող է նաեւ քննադատել իր պետութիւնում առկայ բացերը, դժգոհել, հումորով կամ անհաշտ խօսել այնտեղ առկայ յոռի երեւոյթների մասին, սակայն՝ տիրոջ իրաւունքով, ունեցածը սքափ գնահատողի, ունեցւածք ու երկիր ունեցողի իրաւունքով»:

«Երկիր»-ի խմբագրականում կարդում ենք. «Մենք ճիշտ չգնահատեցինք պատմականօրէն մեզ տրւած պահն ու հնարաւորութիւնը, որն ինքներս էինք ստեղծել եւ

մեր անփոխարինելի երկու նւաճումները՝ անկախութիւնն ու երկու պետութիւնները չկարողացանք ամրապնդել տնտեսական, քաղաքական, բարոյական, մշակութային անհրաժեշտ բազայ ստեղծելով: Բաւարար համարեցինք ունեցածը եւ մեզ թւաց, թէ աշխարհը վաւերացնում է այն ու կորցնել ուղղակի հնարաւոր չի լինելու: Մենք հաւատացինք ձեռքբերածի ամբողջականութեանն ու ինքնաբաւութեանը, ու դա ինքնախաբէութիւն էր: Որովհետեւ իրականում մենք բթացրինք մեր զգօնութիւնը եւ թոյլ տուցինք, որպէսզի միանայ մեր ներսում բոյն դրած ինքնաքայքայման մեխանիզմը: Հիմա աւելի շատ անցած ճանապարհի սխալները սրբագրելու խնդիր ենք լուծում, քան նոր նւաճումների մասին երազում: Իսկ դա դանդաղեցնում է ընթացքը: Մինչդեռ այդ իրաւունքը պարզապէս չունենք՝ քաղաքակրթութեան եւ պատմութեան անիւների տակ չայտնելու համար»:

«Ժամանակ»-ը գրում է. «Անկախութիւնը մեզ համար նւեր չէր, պարզեւ չէր, շահում չէր: Անկախութիւնը մեր իսկ զրկանքների գնով, հազարաւոր հայրենակիցների կեանքի գնով ձեռք բերւած մի նւաճում էր, որի մասին դեռեւս այսօր երազում են շատ ու շատ

ազգեր, անգամ հայերից աւելի բազմաքանակ: Դժբախտաբար, երբ մենք փորձում ենք համադրել արդէն քսանամեակի ընթացքում ունեցած ձեռքբերումներն ու կորուստները, խանդավառութեան եւ վաղւայ հանդէպ մեծ սպասումների հիմքերը սկսում են նւագել: Դժբախտաբար, մեր անկախութեան քսան տարիների ընթացքում մենք ունեցել ենք առնւազն ոչ պակաս ֆունդամենտալ սխալներ ու կորուստներ, քան ձեռքբերումներն էին»:

«Հրապարակ»-ի խմբագրականում նշում է. «Կախեալ պետութիւնը թերեւս նոստենս է, անցած դարերին բնորոշ իրողութիւն, որը խորթ է բանական մարդու բնոյթին ու կերպին, եւ այդ պատճառով էլ մարդ էական ամէն ինչ արեց, որ ազատի դրանից: Ինչպէ՞ս կարող է մարդը չձգտել անկախութեան, չհասկանալ չգնահատել անկախութիւնը: Ինչպէ՞ս կարելի է կասկածի տակ առնել անկախութիւնը: Նոյնն է, որ կասկածեւ մարդ էակի բանականութեանը, ստեղծական ոգուն, ապրելու ու զարգանալու կարողութեանը: Սակայն հասարակութեան մեջ, ցաւօք, կայ հատւած, որը թերահաւատ է, կասկածում է անկախութեան գաղափարին, եւ դա մեր բոլորի ամօթն է ու խաւանը»:

*Tert.am*



# ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ՊԷՏՔ Է ԱԻԵԼԱՑՆԵՆՔ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ»

Անուշ Մարտիրոսեան



Հայ ազգային կոնգրեսի՝ ուրբաթ օրը (Սեպտ.23-ին) Ազատութեան հրապարակում անցկացրած հանրահաւաքում Կոնգրեսի առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ հարկաւոր է աւելացնել իշխանութիւնների վրայ գործադրող ճնշումները:

«Այսօրանից մենք պէտք է աւելացնենք մեր ճնշումները եւ առաւել յաճախակի ու մարդաշատ հանրահաւաքների, ինչպէս նաեւ զանգւածային այլ միջոցառումների միջոցով ստիպենք իշխանութիւններին՝ կատարելու մեր պահանջները», - յայտարարեց Կոնգրեսի առաջնորդը: Այդ պահանջները 8-ն են. - «Մինչեւ տարւայ վերջ անցկացնել արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ, ընտրութիւններից առաջ ԳՀ ընտրական օրէնագրքում կատարել էական փոփոխութիւններ՝

նրանցում ընդգրկելով մեր ներկայացրած յայտնի առաջարկները, առաջիկայ երեք ամիսների ընթացքում բացայայտել 2008 թւականի Մարտի 1-ի տասը սպանութիւնները եւ քրեական հետապնդում սկսել դրանց պատասխանատուների նկատմամբ, ազատ արծակել քաղբանտարկեալ Տիգրան Առաքելեանին եւ կարծել Կոնգրեսի եօթ երիտասարդ ակտիւիստների նկատմամբ յարուցւած քրեական գործերը, վերացնել Երեւան քաղաքում փողոցային առեւտրի վրայ դրւած անօրինական արգելքը, չեղեալ յայտարարել Երեւանում տեղադրւած կրպակների ապամոտաժման վերաբերեալ ընդունւած որոշումը: Դադարեցնել մայրաքաղաքի ճարտարապետական նկարագրի այլանդակումը եւ արգելել Երեւանի կենտրոնում բարձրաշարկ շէնքերի կառուցումը, օրէնքով արգելել բարձրատիճան պետական պաշտօնեա-

ների, Ազգային ժողովի պատգամաւորների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից մամուլի միջոցների եւ լրագրողների դէմ դատական հետապնդումների յարուցման պրակտիկան»:

«Հասկանալի է, որ առաւել դժուարինը առաջին երկու պահանջների կատարումն է», - ասաց Տէր-Պետրոսեանը եւ շարունակեց, - «Ուստի հարկ ենք համարում յայտարարել, որ մենք մաքսիմալիստ չենք, եւ պատրաստ ենք լրջօրէն վերաբերել այդ առթիւ իշխանութիւնների առաջարկած ցանկացած ողջամիտ փոխզիջման»:

«Ինչպէս նշել եմ իմ նախորդ ելոյթում, Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին Հայաստանի քաղաքական ճգնաժամի յաղթահարման հարցում լուրջ բեկում կան վերջնական յստակեցում է տեղի ունենալու: Այս պնդման հաւաստիացումը դուք կը ստանաք յա-

ջորդ հանրահավաքում, որը կը կայանայ Սեպտեմբերի 30-ին», - յայտարարեց Կոնգրեսի առաջնորդը՝ իր ելոյթի ավարտին հանրահավաքականներին տալով յանձնարարութիւն, որպէսզի յաջորդ հանրահավաքին նրանցից իւրաքանչիւրը իր հետ բերի առնազն 5 մարդու»:

Նախքան Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը, Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբեանը միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրեց այն զարգացումների վրայ, որ կարող են տեղի ունենալ Հայաստանում: Զուրաբեանը յայտարարեց. - «Մենք կոչ ենք անում ժողովրդին՝ պատրաստելու քաղաքացիական անհնազանդութեան յաղթարշաւին: Ուրեմն պատրաստեք քաղաքացիական անհնազանդութեան ազգային յաղթարշաւին, որի շնորհիւ ժողովուրդը կը վերագտնի սեփական երկրում իշխելու սուվերեն իրաւունքը, եւ անկախութեան 20-ամեակը կը նշանաւորւի ժողովրդավարութեան յաղթանակով»:

Հանրահավաքի ժամանակ ելոյթ ունեցաւ նաեւ ՀՀԾ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը: Նա յայտարարեց, որ հարիւրաւոր մարդիկ անցած հանրահավաքից յետոյ յանձնել են ՀՀԿ անդամակցութեան կուսակցական տոմսերը՝ ու յաւելեց. - «Իշխանութեան ճեղքը գնաց, եւ այդ ճաքը առաջիկայ օրերին կը լայնանայ»:

*«Ազատութիւն» ռադիօկայանի կայք*

# ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՄԱԿ-ՈՒՄ


## Հայաստանի նախագահը քննադատում է Ադրբեջանին, Թուրքիային՝ առաջընթացի բացակայութեան համար



Ուրբաթ, Սեպտեմբերի 23-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը, ելոյթ ունենալով Միացեալ ազգերի գլխաւոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանում, մասնաւորապէս անդրադարձել է ղարաբաղեան խնդրի խաղաղ հանգուցալուծման գործընթացին եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ տարւող աշխատանքներին: Հայաստանի ղեկավարը խիստ քննադատել է Ադրբեջանին եւ Թուրքիային երկու գործընթացներն էլ խոչընդոտելու համար: «Փոխհամաձայնութեան հասնելու Ադրբեջանի ցանկութեան բացակայութիւնը, նրա որդեգրած «ամէն ինչ կամ պատերազմ» կեցածքը թոյլ չեն տալիս առաջընթաց արձանագրել բանակցութիւններում: Չնայած բոլոր սպասելիքներին, միջազգային հանրութեան բարձր մակարդակի յոր-

դորներին, վերջին՝ կազանեան հանդիպմանը Ադրբեջանը կատարեց հերթական յետքայլը՝ մերժելով նախորդ փուլերում ձեռք բերած համաձայնութիւնները եւ փորձելով փաստացիօրէն ձախողել բանակցային գործընթացը»,- մասնաւորապէս ասել է Սարգսեանը՝ անդրադառնալով միջազգային միջնորդների մասնակցութեամբ խաղաղ բանակցային գործընթացների վերջին զարգացումներին: Խօսելով վերջին տարիներին Թուրքիայի հետ յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղւած փորձի ձախողման մասին, ՀՀ նախագահը մեղադրել է Թուրքիային՝ 2009 թւականին ստորագրւած արձանագրութիւնների վաւերացումն ու իրականացումը վիժեցնելու համար:

Իրանի «Արդիւնաբերութեան, առեւտրի եւ հանքերի պալատ»-ի ամսաթերթ՝ «Այանդէնեգար»-ը իր Յուլիս ամսւայ համարում հանգամանօրէն քննարկել է Իրանի արտահանումների հարցը հարեւան երկրներ: Այդ շրջանակում յատուկ ուշադրութեան է արժանացել նաեւ Իրան-Հայաստան առեւտրական կապերը: Իրան-Հայաստան առեւտրի պալատի նախագահ Լեւոն Ահարոնեանը եւս իր տեսակէտներն է յայտնել այդ թեմայի շուրջ: Ստորեւ ներկայացնում ենք պրն.Ահարոնեանի յօդածի թարգմանութիւնը:



## ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄՐՁԱԿԻՑՆԵՐԸ

*Լեւոն Ահարոնեան  
Իրան-Հայաստան  
առեւտրի պալատի տնօրէն*

**հ**րանն ու Հայաստանը աշխարհի ամենավաղեմի երկրներից են, ուստի դա զարմանալի չէ, որ այս երկու տար-

բեր անցեալներով երկրները այսօր քաղաքական ու առեւտրական բարենպաստ պայմաններում են գտնուում: Հայաստանը պատւար է հանդիսանում Թուրքիայի

եւ Ղրղզստանի ու Թուրքմենստանի եւ իրականում Թուրքիայի եւ շրջանի այլ երկրների առեւտրական յարաբերութիւնների միջեւ: Միաժամանակ Հայաստանը՝

Թուրքիայից ու Իրանից բացի՝ առանձին կարեւորութիւն է վայելում Ռուսաստանի եւ Չինաստանի համար: Յետաքրքիրն այն է, որ Հայաստանը բնական աղբիւրներով այնքան էլ հարուստ չէ եւ միայն ոսկու եւ պղնձի մի քանի հանք ունի, այնուամենայնիւ այս երկրի մարդագլուխ եկամուտը բաւարարում է նրա երեք միլիո-


սրանից 18 տարի առաջ հիմնադրեց Իրան-Հայաստան առեւտրի պալատը, որի աշխատանքի արդիւնքում այս տարիների ընթացքում կայացել են 13 առեւտրական ցուցահանդէսներ: Իրանից Հայաստան արտահանող ապրանքների գինը մինչեւ մի քանի տարի առաջ միայն 10 հազար դոլար էր, սակայն այս թիւը այսօր 300 միլիոն դոլարի է հասել եւ ըստ կանխատեսումների մտաւոր ապագայում աւելի աճ է արձանագրելու: Իրանը մինչեւ վերջերս Հայաստանի հետ առեւտրի աղիւսակում 7-րդ տեղն էր զբաղեցնում, այն ինչ այսօր 4-րդ տեղում է: Այնուամենայնիւ եթէ պետք է Իրան-Հայաստան առեւտրական յարաբերութիւնները առաւել եւս ընդլայնեն, դրա համար բաւարար չեն լինի 13 այդ ցուցահանդէսներն ու ինքնագլուխ առեւտուրը: Ժամանակակից առեւտուրը միջոցներ ու յարմարանքներ է պահանջում: Իրանի պետութիւնը այդ միջոցներն ու յարմարանքները մասնաւոր բաժնին չի տրամադրել եւ նոյնիսկ մի գրասենեակ կամ խրճիթ ու առեւտրական կենտրոն չունի Հայաստանում, որպէսզի դիրութիւններ ստեղծի մասնաւոր բաժնի առեւտրի համար: Սա այն պայմաններում, երբ Հայաստանը կարող է որպէս թռիչքի պատւանդան ծառայել Իրանի առեւտրի համար, քանի որ Հայաստանի առջեւ Ռուսաստանի պէս ովկիանոս է տարածում, եւ այս երկիրը կարող է կամուրջ հանդիսանալ Իրան-Ռուսաստան առեւտրական յարաբերութիւնների համար:

**Գործարանները ներդրման են սպասում:**

Հայաստանը լայն առիթներ է ընձեռում Իրանի մասնաւոր բաժնին. օրինակի համար Հայաստանում կան հարիւրաւոր գործարաններ, որոնք ամբողջ տարողութեամբ չեն աշխատում եւ եթէ Իրանը, որ շրջափակման մէջ է, այս երկրում համատեղ արտադրութիւն ձեռնարկի, մեծ առաջխաղացում է արձանգրւելու Իրան-Հայաստան առեւտրական յարաբերութիւններում: Ներկայիս Իրանը տիրել է Հայաստանի սննդամթերքի շուկան, սակայն կարող է միաժամանակ ջրակենցաղների արտահանումով լաւ շուկայ գտնել Հայաստանում: Միւս կողմից Հայաստանը գիտականօրէն պահպանող հարուստ մարգագետիններով, հնարաւորութիւն ստեղծեց Իրանի համար, որպէսզի յատուկ սպանդանոցներ կառուցելով այդ երկրում, հայկական ընտիր միսը ներմուծել՝ բրազիլականի փոխարէն:

**Իսկ որո՞նք են Իրան-Հայաստան առեւտրական յարաբերութիւնների գլխաւոր մրցակիցները:**

Դոլարի առումով Իսրայէլը Իրանի գլխաւոր մրցակիցն է: Հայաստանը հարուստ է ադամանդի մշակման մասնագէտներով, եւ հրեաների տնտեսական գործունեութիւնը Հայաստանում, հիմնականում հարաւաֆրիկեան ու սիբիրեան ադամանդի կապակցութեամբ է: Միւս կողմից Ֆրանսիան եւս մեծ ներդրումներ է կատարել Հայաստանում: Մի խօսքով գերագոյն մտահոգութիւնն այն է, որ Հայաստանի շուկայից զրկւենք: Հայերը պատմականօրէն բարեկամաբար չեն տրամադրած թուրքերի հանդէպ, սակայն դա չի նշանակում, որ թուրքերը հազար ու մի դիւանագիտական հնարքով Իրանի առեւտրի ետնաբակը իրենցով չանեն:



«Այանդէնեգար» ամսաթերթը հրատարակում է «Իրանի առեւտրի եւ արդիւնաբերութեան պալատ»-ի միջոցով եւ պարունակում է երկրի տնտեսութեան մասին շահաւետ յօդածներ

նանոց բնակչութեան կարիքները:

**Սակայն Իրան-Հայաստան առեւտրական յարաբերութիւնների անցեալը ինչպիսի՞ն է եղել:**

Իրանի մասնաւոր բաժինը Հայաստանի հետ առեւտրական կապերն ընդլայնելու նպատակով



# ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ


## ԻՆՉՈՒ ԱՅՐԵՑԻՆ «ԱՅՐՈՂ ԱՅԳԵՍՏԱՆՆԵՐ»-Ը

*Ոորերթ Սաֆարեան*

1967 թվական, Երեւանի համալսարան, այրում են Գուրգէն Մահարու նոր հրատարակած «Այրող Այգեստաններ» վեպը: Գրողների միութիւնը խիստ դատապարտում է գիրքը, արտաքսում է Մահարուն:

2006 թվական. Երեւանում «Այրող Այգեստաններ»-ի 40-ամեակի յոբելեան. Հայ գրողները բանախօսում են գրքի մասին, այն համարում փառահեղ, գլուխ գործոց, հայ գրականութեան դասական գործերից մէկը:

Դիրքորոշումների զարմանալի փոփոխութիւն, առանց մեկնաբանութեան: Առաջ գղջումի: Առանց վերլուծութեան եւ բացատրութեան եւ ինքնաքննադատութեան: Ո՞վ կամ ովքե՞ր էին դրա պատասխանատուն: Ովքե՞ր կամ ո՞ր գրողները: Խօսւում է Պարոյր Սեւակի մասին, որ այդ օրերին Գրողների միութեան վարչութեան անդամ էր: Նաեւ Մկրտիչ Արմէնի մասին: Եթէ այդպէս է, նման վերաբերմունք մի գրողի գրքի հանդէպ, գրքի հրկիզումը, որ երեւի անմախաղէպ է ժամանակակից պատմութեան մէջ, բացի նացիների Գերմանիայում (այն էլ ինչքան գիտենք փողոցում եւ ոչ թէ համալսարանում), ի՞նչ կապ



ունի օրինակ Սեւակի ազգային մտածելակերպի հետ: Մի խօսքով, ինչո՞ւ տեղի ունեցաւ դա, ինչպիսի՞ գաղափարախօսութեան ու մտածելակերպի արդիւնքն էր, եւ արդեօ՞ք այդ մտածելակերպը այսօր վերացել է մեր միջից: Ի վերջոյ ամէն բան չի կարելի բացատրել որպէս թիրիմացութիւն, կամ ամէն ինչ գցել ժա-

մանակի սովետական իշխանութիւնների վզին:

**Ինչի՞ց էին զայրացել «Այրող Այգեստաններ»-ի հակառակորդները:**

Առաջին հերթին ասւում էր, որ Գուրգէն Մահարին պաշտպանում

# ՌՈՒ ԳՈՂԳՈԹԱՆ

է ցեղասպանութեան պատմութեան թրքական տարբերակը, քանի որ մեղադրում է քաղաքական կուսակցութիւններին եւ մի տեսակ ազգային ազատագրական շարժումը համարում է ցեղասպանութեան պատճառներից մէկը. այդպէս էին յաւակնում նրանք: Ահա հատուած գրողների միութեան յայտարարութիւնից.

«Յեղինակը չհասկանալով պատմական իրադարձութիւնների իմաստն ու ժողովրդական պայքարի նշանակութիւնը, յանգել է անընդունելի, հակապատմական ընդհանրացումների, որ իբր հայ ժողովրդի մեծ ողբերգութեան պատճառը «բզեզների բունը անտեղի խառնելն է»:

Դատապարտում է Մահարին թէ ինչո՞ւ Վանի դիմադրութեան պայքարի օրերին զբաղել է Աւանէս աղայի սիրավէպով, նրա սեռական յարաբերութեան նկարագրութեամբ եւ իբր թէ այսպիսով վարկաբեկել է Վանի դիմադրութիւնը: Եւ ինչո՞ւ նա չի նկարագրել Վանի ժողովրդի պայքարը թուրքերի դէմ:

Մահարին մեղադրում էր (այս մէկը սփիւռքում եւ դաշնակցականների կողմից), որ ինչո՞ւ Վանի դաշնակցականների ղեկավար Արամին ներկայացրել է որպէս կնամուլ անձնաւորութիւն:

Նրան մեղադրում էին նաեւ այն բանում, որ խօսել

## ՊԱՏՈՒՄԱՅԻՆ ԹԵՆԵՐ ԵՒ ԿԵՐՊԱՐՆԵՐ

### Սուրադիսանեան եղբայրներ

Աւանէս աղա. վէպի հերոսը. մանր բուրժուա (վաճառական): Կինը՝ Սաթենիկը եւ երեխաները՝ պատանի տարիքի Սուրէնն ու Լիան եւ անչափահաս Սուրադը: «Այլուող Այգեստաններ»-ի պատումային հիմնական թելը այս ընտանիքի պատմութիւնն է: Մի խօսքով, 1915 թւականի շուրջ Վանի պատմութիւնը Մահարին ընթերցողին ներկայացնում է մի վաճառականի հայեացքից: Աւանէս աղան ժլատ է, փողամուլ, բայց եւ ունի կեանքի մասին սեփական փիլիսոփայութիւնը, որին, կարելի է ասել, համակրում է Մահարին: Դա կեանքի առաջնահերթութիւնն է մահուան հանդէպ: Նա համոզուած է, որ յեղափոխական ցանկացած գաղափարախօսութեան հիմքում ընկած է ձգտում դէպի մահ եւ աւերում: Աւանէս աղայի եղբայր Գէորգ վարժապետը, զրքի կարելոր կերպարներից է: Նա հարբեցող ու ալարկոտ է, եւ յաճախ արժանանում է Աւանէս աղայի նախատինքին: Վարժապետ Գէորգը յեղափոխական է եւ Վանի դիմադրութեան օրերին որպէս քարոզիչ քաջալերում է կռուողներին: Գէորգի մահից յետոյ, Աւանէս աղան իր տունն է բերում նրա կնոջը՝ Վերժինէին, որի հետ նաեւ ունենում է սիրային ու սեռային կապ: Սուրադիսանեան եղբայրներից երրորդը՝ Մխօն, Գէորգի հակապատկերն է: Նա խեղճ ու կրակ, չարքաշ գիւղացի է, որն ապրում է Վանի շրջակայ գիւղերից մէկում:

Համբարձումը Աւանէս աղայի միւս եղբայրն է, որը գաղթել է Ստամբուլ եւ այնտեղ մահացել է հիւանդութիւնից: Վանի ժողովուրդը ասում են, որ նա մահացել է վեներական հիւանդութիւնից, որը պարզապէս պատիւ չի բերում Սուրադիսանեաններին:

### Միհրան Մանասարեան

Միհրան Մանասարեանը «Այլուող Այգեստաններ»-ի մէկ այլ կարելոր կերպարն է: Նա ծառայութիւններ մատուցելով յեղափոխականներին, ձեռք է բերել ընդարձակ կալւածներ: Միհրանը սիրահարուած է Աւանէս աղայի դստերը՝ Լիային եւ Երագուն է անուանանալ նրա հետ: Նա իր կալւածներում հիւրասիրում է թուրք պաշտօնեային՝ միւղուրին եւ նրա կնոջը՝ երիտասարդ Նանային: Նա սիրաբանում է Նանայի հետ, բայց եւ միաժամանակ մեղքի զգացումից ելնելով, մի պահ մտածում սպանել նրան: Միհրանը յեղափոխականների պատւերով սպանել էր իր կնոջ եղբօրը, որի համար վատ համբաւ էր վայելում քաղաքում:

Միհրան Մանասարեանի պատմութիւնը իրականում շատ քիչ բանով է կապուում Աւանէս աղայի ընտանիքի պատմութեանը. միայն այսքանով որ Միհրանը սիրահարուած էր Լիային:

### Դաշնակցական կերպարներ

«Այլուող Այգեստաններ»-ում հանգամանօրէն նկարագրել է ազգային կուսակցութիւնների, յատկապէս Դաշնակցութեան գործունէութիւնը քաղաքում: Դաշնակցականների ղեկավարներից՝ Արամը ներկայացրել է որպէս կնամուլ անձնաւորութիւն: Վաճառանը աւելի խելօք մարդ է նկարագրել, իսկ Իշխանը, նա է, ով գործադրում է Ախթամարի վանքի հարստութեան թալանը՝ յեղափոխական գործողութիւնների ծախսերը հոգալու համար: Աւանէս աղայի դուստր՝ Լիան, սիրահարուած է Իշխանին:

է հայ Մանասարեանի եւ թուրք Նանայի սիրոյ մասին եւ ինչու Նանայի անուանուն՝ միւղուրին, դրական կերպար է ներկայացրել:

## Ձայրացել էր թէ՛ սփիւռքը, թէ՛ Դայրենիքը

Թէ՛ դաշնակցականները, թէ՛ կոմունիստները: Թէ՛ ամբոխը, թէ՛ մտաւորականութիւնը: Ահա այսպիսի համատարած կատաղի գայրոյթ եւ հալածանք վկայում է այն մասին, որ այսպիսի հակառակ հակումները, ունէին մի գաղափարական ընդհանրութիւն, որն էր ազգային գաղափարախօսութեան մի նեղ ընկալում, որը աւելի յարմար կը լինի անւանել թրքատեացութիւն, եւ երկրորդ հակաժողովրդավարական խորն մտածելակերպը, ըստ որի եթէ չես հաւանում մի գրողի մտածելակերպը, իրաւասու ես նրան հալածել, նրա գիրքը այրել, նրանից պահանջել՝ ինքն իրեն դատապարտել եւ իր գրածը «վերանայել»: Արդեօ՞ք այսպիսի մտածելակերպը այսօր վերացել է մեր միջից:

Գուրգէն Մահարին հաւատացած էր, որ «Այրուղ Այգեստաններ»-ը գրում է իր քաղաքի՝ Վանի մեծարման համար, Վանի դիմադրական պայքարի զոհերի յիշատակը կենդանի պահելու համար: Գրքի զանազան հատւածներում նա Աւանէս աղայի բերանից հպարտանում է Վանի կռիւներին մասնակցող եւ այն ղեկավարող մարդկանցով: Աւանէս աղան հպարտանում է, որ իր երեխաները մասնակցում են կռիւն, բայց նա որոշել է ամէն բան ընկալել ոչ թէ հմայւած մարդու տեսանկիւնից, այլ՝ մի մարդու, որ ոչ ամէն բանն է ընդունում, մի պահպանողական վաճառականի, որը մի տարբեր դիտանկիւն է, եւ չի տեղաւորում կարծրատիպերի մէջ, եւ այդ պատճառով էլ դատապարտելի է դառնում բոլորի կողմից:

... Ստորեւ կը բացատրեն Գուրգէն Մահարու «Այրուղ Այգեստաններ»-ը վէպի ընդունելութիւնը մի ողջ երկրի կողմից, հեղինակին վարկաբեկելու արշաւը — ուղղակի ազգային արժանապատուութեան անունից —, որը կազմակերպւեց 1967-ին անմիջապէս գրքի հրատարակութիւնից յետոյ, եւ այն անհաւատալի հարւածները ողջ բնակչութեան ձեռքով, սկսած հասարակ քաղաքացիներից մինչեւ մտաւորականները եւ նոյնիսկ իշխանութիւնը, որոնցից Մահարին տառապեց: Այս դէպքերը քսաներորդ դարում հայերի մտաւորական պատմութեան մասն են կազմում: Դրանք ոչ մի պատիւ չեն բերում նրանց, բայց այդուհանդերձ մի կարելի դրւագն են այն բարդ յարաբերութեան պատմութեան, որ հայերը հաստատում են իրենց անցեալի եւ ներկայի հետ:

«Այրուղ այգեստաններ»-ի միւթը Վանի վերջին տարիներն են. Քաղաքի դիմադրութիւնը թրքական բանակի եւ ամբոխի դէմ, որին հետեւում է վանի դատարկումը: Թւում է, որ Մահարին, իրենից առաջ շատերի նման, կատարում էր յիշողութեան գործ. Նա վերաստեղծում էր անցեալը, փորձում էր մոռացութիւնից փրկել մշտապէս անհետացած մի աշխարհ: Բայց նաեւ հաշի էր նստում այդ անցեալի հետ, իր մանկութեան անցեալի հետ: Ի վերջոյ, նա պատմում էր մի աղէտի պատմութիւնը: Անհերքելի է, որ նրա թիրախը այն մարդիկ էին, ովքեր պատասխանատու էին այս աղէտի համար: Վանի վերջին օրերի պատմութեան մասին նրա պատումի յետին պլանում «ազգային ազատագրական» շարժումն է, զինեալ դիմադրութիւնը, Օսմա-

նական կայսրութեան հայերի ոչնչացումը, եւ ի վերջոյ աղէտը: Վէպը արտայայտում է նոր պատմութեան մի մեկնաբանութիւն, մի անցեալ, որի հետ հայերը դեռեւս խնդիր ունէին: Վէպի շուրջ բարձրացած կատաղի վէճերը, նզովքը, հայիոյանքներն ու դատապարտութիւնները, հարցի տակ են տանում այս պատմութեան ամբողջութիւնը, բայց եւ միաժամանակ բացայայտում են հայկական հասարակութեան գործելակերպը 1967 թւականին: Այս դէպքերը հնարաւոր չէ հասկանալ սովետական ենթատեքստից դուրս, որը մօտ յիսուն տարիներ դադարեցրել էր աղէտի մասին ցանկացած աշխատանք, բոլոր տեսակի պատմագրական ուսումնասիրութիւն՝ ազատագրական շարժման մասին, անցեալը վերարտադրելու եւ այդպիսով այն յաղթահարելու որեւէ փորձ: Վէպի հրատարակումը արթնացրեց կրքեր, որոնք քնած էին մնացել երկար տարիներ: Այսօր, Վէպի որեւէ լուրջ քննարկում անհրաժեշտաբար կարթնացնի մի դար կուտակած կրքեր, ատելութիւն, յուսախաբութիւն, միտումնաւոր մեկնաբանութիւններ, հաւատաքննութիւն, պարտադրւած տեսակէտներ, մտային նենգափոխում:

Ուրեմն, ի՞նչ տեղի ունեցաւ 1966-ին եւ 67-ին: Նախ, թոյլ տւեք մէջբերել հեղինակի կնոջ՝ Անտոնինա Մահարու յիշողութիւնները.

*Գուրգէնն սկսեց գրել իր պատմական վէպը Վանի մասին, իր մանկութեան քաղաքի մասին, երբ շատ վատառողջ էր: Գրքի հիմնական մասը գրուեց Բալանկայում, ուր թարմ օդն ու մեղմ եղանակը նրան տալիս էին ստեղծագործական մղում: Նա շտապում էր: «Թող նախքան մեռնելս այս գիր-*

քը աւարտեմ: Յանկանում եմ մի բան անել սիրածս քաղաքի համար, աղէտի զոհերի յիշատակին»:

Յամենայն դէպս Գուրգէնին յաջողեց գրել իր դասական գիրքը, որը պիտի այդքան աղմուկ բարձրացներ: «Այրուող Այգեստաններ»-ը նրան բերեց մեծ դառնութիւն եւ ցաւ, իսկ նրա բարեկամներին՝ յուսահատութիւն: Այդ արժէքաւոր գրական գործը ցեխում ոտնահարուեց: Անհնարին է նկարագրել այդ տգեղ արշաւը, որը կազմակերպուեց հիւանդ գրողի դէմ: Նրանք պատառոտեցին գիրքը, այրեցին այն: Քար նետեցին մեր պատշգամբին, ձմերուկի կծեպ, ամէն տեսակի կեղտ ու աղբ: Ցաւալի հեռախօսներ գրողին, անանուն գրութիւններ եւ նամակներ: Իհարկէ, ես շատ բաներ թաքցնում էի Գուրգէնից: Նա երբ իմացաւ, անչափ նեղացաւ. «Դու պիտի այս կեղտը փրկես պատմութեան համար: Ոչ մի բան մի՛ գեղջիր, ոչինչ մի թաքցրու ինձանից: Ես պիտի իմանամ ինչ է իմ սիրելի եղբայրների նպատակը: Գուցէ դա իմ ճակատագիրն է»: Երբ դեռ Բալանկայում էր, Երեւանից նրան գրում էին. «Անիծած թուրք, չփորձես վերադառնալ: Ամէն դէպքում, քեզ սպանելու ենք»: Գուրգէնը վախենում էր վերադառնալ, բայց ես պնդեցի, որ վերադառնանք, նրան համոզեցի: Վերադարձանք Երեւան, նա շարունակեց աշխատել իր սենեակում, եւ փողոց դուրս չէր գալիս ...

Երբ նա գրում էր «Այրուող Այգեստաններ»-ը, Մահարին վերապրում էր իր յիշողութիւնները: Գիշերները՝ մոլորաբաններ: Երագում տեսնում էր ջարդերի սարսափը: Այս սարսափելի յիշողութիւնները սաստկացրին նրա ցաւերը, այնպէս, որ հառաչում էր. «Սիրելի մայրիկ, ես մեռնում եմ»:

Գուրգէնի մահից յետոյ, նրանք սկսեցին տանջել ինձ: Նրանք, վանեցիները, մեր սիրելի վանեցիներ-



րը: Օրինակ, կէսգիշերին կը հեռաձայնէին ինձ. «Ինչո՞ւ այսքան ուշ ընկալուէ՞ր վերցրիր: Գիտես, դու ես իսկական մեղաւորը: Եթէ դու չլինէիր, նա տարբեր բան պիտի գրէր ...»: Յետոյ կը հայիոյէին Մահարու յուշը: Անպէս, որ, ես էլ իմ բաժինն ստացայ: Նրանց ասում էի, եթէ բան ունեն ասելու Գուրգէն Մահարուն, թող գնան նրա ներկայի «Բնակավայրը» եւ գտնեն թէ ինչու նա գրեց այնպէս, ինչպէս որ գրեց:

Անտոնինա Մահարին, իր գրքի մի ուրիշ հատուածում, առանձացնում է Մահարուն վարկաբեկելու արշաւի կազմակերպողին, որպէս մի գրող, որ «անհետացաւ խորհրդաւոր պայմաններում», բնակաւարտ մատնանշելով Պարոյր Սեւակին: Ի պաշտպանութիւն վերջինի ասել է, որ վարկաբեկման արշաւը այնքան համընդհանուր էր, որ կազմակերպողի կարիք չուներ:

... Այսպէս, Մահարուց պաշտօնապէս պահանջեցին, որ հրա-

ժարի իր գործից: Զրաւերը վերելից էր, Կուսակցութիւնից, նրան մօտ ընկերոջ խողովակով: Գրողների միութիւնը պաշտօնապէս դատապարտեց Մահարուն եւ մի աներիչ զեկոյց հրատարակեց, կրկին նոյն պատճառաբանութեամբ. Մահարին պաշտպանում է պատմութեան թրքական վերսիւնը: Կազմակերպած թէ ոչ կազմակերպած, Մահարու հետաքննութիւնը ողջ 1967-ին անելի թափ ստացաւ. Երեւանի համալսարանում գիրքը դատապարտելու նպատակով յատուկ հանդիպում տեղի ունեցաւ: Կոչ արուեց պետական հրատարակչական հաստատութեան շրջանառութիւնից հանել գիրքը: Վերջապէս, գիրքը հանդիսաւոր կերպով այրուեց հասարակութեան առջեւ: Դա Մահարու տարողութիւնից անելի վեր էր: Իրականում արշաւը ուներ պաշտօնական, ինչպէս նաեւ ժողովրդական կողմ: Ողջ ազգը, ասես նրա արժանապատուութիւնը վիրաւորած լինէր, ոտքի էր կանգնել գրողի եւ նրա վէպի դէմ: Արշաւը կործանիչ ազդեցութիւն ու-

# ՄԱՀԱՐՈՒ ՎԵՐՋԻՆ ԿԱՐՈՒՍԵԼԸ

Գրիգոր Աճեմեան


Նեցաւ Մահարու վրայ: Քառասուն տարի նա իր վէպի կերպաները փայփայել էր իր մտքում, դիմացել էր բոլոր նւաստացումներին, Սիբիրից վերադարձել էր այն մտադրութեամբ, որ տեղի չտայ իրեն ճնշողների վրդովմունքի եւ քէնի առջեւ, եւ այժմ հոգեպէս ոչնչացել էր իր դէմ արշաւից: Անսպասելի էր, բայց նա ընդունեց վերանայել իր վէպը: Թւում է, որ նա այդ գործը կատարեց 1967-ի վերջերին եւ 1968-ի առաջին կիսամեակում: 1968-ի Յուլիսի 13-ին, իր ընկեր Լեւոն Յախվերդեանին գրեց. «Յամաձայն եմ քո տւած բոլոր կարծիքների հետ (դա զարմացնում է քեզ): Ես վէպը չեմ փոխել: Այն վերամշակել եմ եւ յանձնել նոր տպագրութեան: Կարծում եմ դա կը գոհացնի քեզ»: Գուրգէն Մահարին մահացաւ մի տարի յետոյ:

Վէպի ընդունումը սփիւռքում պակաս կատարի չէր քան Յայաստանում: Այն միաձայնութեամբ դատապարտեց, քանի որ պարզապէս դէմ էր գնացել պատմութեան ներկայացման հաւատարմօրէն պահպանւած հերոսական մի վարկածի, մի անխախտ դիմադրութեան, ազգային ազատագրական մի պայքարի, որը երբեմն ողբերգական, բայց բոլոր պարագաներում փառաւոր էր: ...

*Յատուած «Աղէտի գրողները»  
գրքից  
Անգլերէնից թարգմանեց՝ Ռ.Ս.  
Վերնագիրը թարգմանչինն է:*

Աղմուկը ծրագրաւորւած էր վաղօրօք: Թերթելով 1966-67 թւականների հայ պարբերականները՝ մենք չհանդիպեցինք ինչպէս մեզ մօտ, այնպէս էլ սփիւռքում որեւէ տեղեկատուութեան մնան խորագրով գրքի լոյս տեսնելու մասին: Սովորաբար «Գրական թերթը» տեղեկ էր պահում նոր գրքերի մասին մեր ընթերցողին, իսկ մշակութային կապերի կոմիտէն՝ սփիւռքին: «Այրուղ Այգեստաններ»-ի մասին մեր մամուլը պահպանեց քար լռութիւն, իսկ արտասահմանն սկսեց խօսել մեծ ուշացումով՝ այն էլ Յայաստանից տրւած ազդանշաններով: Բաւական էր, որ 1967 թւականի ամռանը Գ. Մահարին դուրս գար Երեւանից, հրապարակեց նախադէպը չունեցող մի փաստաթուղթ՝ գրողների միութեան քարտուղարութեան որոշումը վէպի մասին: Ասես կրկնեց 1924 թւականը, երբ հեռակայ կարգով գրողը վտարեց գրողների ասոցիացիայից: Ասես կրկնեցին ժղանովեան ժամանակները, երբ պաշտօնական որոշում հանեց Ա. Ախմատովայի եւ Մ. Ջոշչենկոյի գործերի մասին: Նման ամօթաբեր գործերը չէին կարող կատարել անթերի: Քարտուղարութեան որոշումը նոյնպէս կաղում էր երկու ոտքով.

«Անտարակոյս իր ժամանակի բուրժուական եւ մանր բուրժուական կուսակցութիւններն ու քաղաքական հոսանքները՝ ճիշտ չըմբռնելով հայ ժողովրդի կացութիւնը եւ տւեալ ժամանակի իրադրութիւնը, ի վիճակի չէին ուղղութիւն տալ, իմաստաւորել ու գլխաւորել ազգային-ազատագրական արդարացի պայքարը, ժողովրդական զանգւածների ցատումն ու ընդլզումը ճնշման ու բռնութեան դէմ: Այդ պայքարի ընթացքին վնասեց յատկապէս դաշ-



նակցութեան արկածախնդրային գործունէութիւնը»:

Յիշենք այս հակադաշնակցական «բարաթը» եւ շարունակենք ընթերցումը՝

«Սակայն հեղինակը, չհասկանալով պատմական իրադարձութիւնների իմաստն ու ժողովրդական ինքնուրոյն պայքարի նշանակութիւնը, յանգել է անընդունելի, հակապատմական ընդհանրացումների, որ իբր հայ ժողովրդի մեծ ողբերգութեան պատճառը «Բզեզների բունը անտեղի կերպով խառնելն է»:

1967 թւականին քարտուղարութեան կազմում էին Է. Թոփչեանը, Պ. Սեւակը, Զր. Յովհաննիսեանը, Ստ. Ալաջաջեանը եւ Ա. Շաթիրեանը: Եւ հինգ գրական այրեր՝ մատները ճակատին, սարքել էին տարրական տրամաբանութեանը չդիմացող փաստաթուղթ: Եթէ ճիշտ է, որ մեր քաղաքական կուսակցութիւններն ի վիճակի չէին գլխաւորելու «ազգային-ազատագրական շարժումը», իսկ այդ կուսակցութիւններից առաջատարը՝ դաշնակցութիւնը, վարել է «արկածախնդրային գործունէութիւն», ապա ո՞ւր մնաց հեղինակի



դէմ յարուցած գլխաւոր մեղադրանքը «բզեզների բունը խառնելու» մասին:

Վրիպումը «վրիպեց» բոլորի աչքերից: Դաշնակցական մամուլն էլ աչք փակեց «ափաշկարա» անհեթեթութեան առաջ եւ ողջունեց պաշտօնական որոշումը՝ վէպը վարկաբեկելու գլխաւոր խնդիրը լուծելու համար...

Յաջորդ ազդանշանը Երեւանի համալսարանում վէպի քննարկման արդիւնքների հրապարակումն էր: Դա յետստալինեան հայ առաջին գրական ինկվիզիցիան էր, որտեղ կրակին յանձնւեցին «Այրուղ ալգեստանները» եւ դրա հեղինակը: Այն անցկացւեց համաձայն կուտակած ռուսական փորձի՝ ստալինեան (Ախմատովա, Ջոշչենկօ, Օլեշա...) եւ յաջորդող ժամանակների (Սոլժենիցին, Պաստեռնակ, Դոլլաթով, Բրոդսկի...): Ձեկուցումով հանդէս եկաւ Գ. Անանեանը: Նա դուրս չեկաւ պաշտօնական յայտարարութեան սահմաններից եւ փորձ անգամ չկատարեց իր խօսքը գրական յենքի վրայ կառուցելու, ինչի մասին վկայում է «գրականագիտական» միակ մեղադրանքը. «Արձակագիրը փորձել է ողբերգական երեւոյթների մասին խօսել... ծիծաղելով, մի հանգամանք, որը վէպը զրկել է պահանջած լրջութիւնից» (երջանի՛կ Սերւանտես, երի՛ցս երջանիկ Գոգոլ եւ Պարոնեան, որոնք թողեցին այս կապոյտ մոլորակը՝ անանեանական յայտնագործութեանն անտեղեակ): Յաջորդող ելոյթները գրեթէ չեն տարբերել իրարից, բացառութեամբ Զրանտ Թամրազեանի, որն ինչ-որ չափով դէմ գնաց ընդհանուր հոսանքին: Չառանձնացնելու համար գորշ մասսայից մնացածներից որեւէ մէկին՝ բերենք բնորոշ մի մէջբերում, առանց հեղինակին նշելու. «Այս վէպով Մահարին վարկաբեկել է հայ ժողովրդին առանց հասկանալու, որ հայ ազգային-ազա-

տագրական շարժումը ոչ թէ ինչ-որ կուսակցութիւնների, այլ ժողովրդի ազատատենչ ոգու արտայայտութիւն է: Արեան մեջ խեղդուած ոչ մի ազատագրական շարժում դեռ իրաւունք չի տալիս խօսելու ժողովրդի ազատատենչ ոգու դէմ, առաւել եւս այդ ոգին ինչ-որ կուսակցութիւնների վերագրելու եւ ապա վարկաբեկելու այն, ինչ եղել է հերոսական, լուսաւոր, ինչ յարգանքի զգացում է ծնել ժողովրդի մէջ...»:

Բառե՛ր, բառե՛ր, բառե՛ր, որոնց յետեւում կորցւած երկիր կար եւ մի ամբողջ ժողովուրդ...

Քարտուղարութեան որոշման մէջ խուլ ակնարկում են «բազմաթիւ գրախօսականները», սակայն անցած տասնամեակներում դրանցից ոչ մէկը լոյս աշխարհ չեկաւ՝ թէկուզ ուշացած: Դրանք կարող էին հրապարակել, որովհետեւ գրողի մահից մինչեւ սոցիալիստական հասարակարգի փլուզումը, ինչպէս կը տեսնենք, շարունակուում էր Գ. Մահարու դէմ չյայտարարած պատերազմը:

Մնաց փաստը, որ երկրից տրւած իւրաքանչիւր ազդանշանին

սփիւռքում յետեւում էին գրականութեան հետ կապ չունեցող հրապարակումներ: Դաշնակցական մամուլը պայքարում էր համագեւոր սպիտակեցման համար եւ սեւացնում գրողին, իսկ անտեղեակները ողջունում էին... խօսքի ազատութեան անսպասելի դրսեւորումը այնպիսի փակ երկրում, ինչպիսին էր Խորհրդային Զայաստանը: Այդ «ազատութիւնը»՝ օրը ցերեկով գրքի պաշտօնական վարկաբեկումը, զուգակցում էր հեղինակի դէմ տարուող ճիգլիթական քաղաքականութեան հետ, որը, կուսակցութեան Կենտկոմի լուռ համաձայնութեամբ, ուղղորդում էր գրական «գեներալի»՝ Էլւարդ Թոփչեանի առանձնասեմեակից: Այդ քաղաքականութեան գինը գրողի կեանքն էր...

*Աղբիւր՝ Ազգ օրաթերթ*

## «Այրուղ Ալգեստաններ»-ի հրատարակութեան ժամանակագրութիւն

- 1966 Առաջին հրատարակութիւն
- 1968 Մահարին տպագրութեան է յանձնում «վերամշակւած» հրատարակութեան օրինակը
- 1969 Զեղինակի մահը
- 1979 «Վերամշակւած» տարբերակի հրատարակութիւնը, որպէս Մահարու երկերի հաւաքածոյի չորրորդ հատոր, քանի տարի ուշացումով: Զիմնականում գլուխներ են աւելացւած եւ գիրքը աւելի ծաւալում է քան առաջին տարբերակը:
- 2004 Գրքի գիտական հրատարակութիւնը Երեւանում, Մահարու որդի՝ Գրիգոր Աճեմեանի աշխատասիրութեամբ, բնագրի հետ համեմատուած, նախկին հրատարակութիւնների մեկնութիւններով եւ ծանօթագրութիւններով:
- 2007 Գրքի առաջին հրատարակութեան անգլերէն թարգմանութեան հրատարակութիւն, թարգմանութեամբ Զայկ եւ դիք Թահաի: Black Apollo Press, Մեծ Բրիտանիա:

Դրսում, Վանի փողոցներում, կռիւ է: Վանեցիք դիմադրում են թրքական բանակի ու թուրք խուժանի դէմ: Կրակոցի ձայները լսւում են Աւանէս աղայի տանը, ուր վանեցի վաճառականն ու նրա եղբայր Գեորգը, օղու սեղանի շուրջ փիլիսոփայում են: Աւանէս աղայի կինը՝ Սաթենիկը, ինչպէս աւանդոյթն է, նրանց հիւրասիրում է լաւաշով ու տարեխով: Որքան տաքանում է նրանց գլուխը, նրանք աւելի խորն են քննարկում կեանքի, մահւան, կռիւ եւ հայրենիքի իմաստը: Միաժամանակ, այս կռիւ օրերին, երբ ամէն ինչը տարբեր է խաղաղութեան ժամանակներից, կարծես Աւանէս աղայի եւ վարժապետ Գեորգի սրտում ոնց որ արթնանում է վաղուց անհետացած եղբայրական սէրը:

## «ԱՅՐԻՈՂ ԱՅԳԵՍԱՆՆԵՐ»` ՀԱՏԻՍԾ

Օղու շիշը զգալիօրէն իջել էր, Սուրադիսանեան եղբայրների տրամադրութիւնն զգալիօրէն... ասել բարձրացել՝ նշանակում է մեղանչել ճշմարտութեան դէմ եւ սխալ պատկերացնել նրանց հոգեվիճակը: Խաղաղ պայմաններում այդքան օղի խմելուց յետոյ կարող էին հասնել «Յայր իմ, Յայրիկ, քո հայրենիք» երգելու կամ գծուելու աստիճանին, սակայն նոր այս պայմաններում այլ է ընկալւում ու տարողութիւնը, նոր այս պայմաններում, երբ պատերազմական է դրութիւնը, գործում են ինչոր նոր զգայարաններ եւ չեն գործում որոշ զգայարաններ...

-Տարբեր կողմերէն ելանք, բայց նոյն տեղը հասանք,- բացականչեց պարոն Գեորգը, Վանը՝ վանեցիներուն: Վանը՝ վանեցիներուն, -ծայնը բարձրացրեց նա եւ շարունակեց,- թող ոռնան թնդանօթներ եւ թող սուրան թշնամական դիրքերէն հազար ու հազար, հազար ու հազար գնդակներ: Վանը պիտի ապրի: Պիտի ապրի Վանն իր գարուններով, երբ կանհետանան ձեան վերջին ծէնները, երբ բարդիսաբախներն իրենց կանաչ շեղբերը կը ցցեն հողէն դուրս, երբ գարնանային թռչուններն իրենց գեղգեղանքը կը լցնեն պարտէզներում եւ այգիներուն մէջ, երբ ժիր ու ժրաջան Վանեցին բահը կը խրէ հողին ընդերքը եւ կը փորէ, կը փորէ... երբ հողէն կառնես հոտերն ու բոյրերն այն ամէնի, ինչ յետոյ պիտի հասնի,- ստեպդիմի հոտ, ծիրանի հոտ, սուսամբարի հոտ ու հոտեր, հոտեր...`

-Պիտի ապրի՝ Վանն իր ամառներով, երբ ծովն ու երկինքը կապոյտ են, իսկ Այգեստանը կանաչ, երբ արեւն իր համն ու գոյնը կու տայ հոտաւէտ նրգերուն, վանատուր պտուղներուն, բանջարեղէններուն ու պէս-պէս ծաղիկներուն: Երե-

կոյեան քեզի հասաւ ջրի հերթը, աղնծած այգին ջուր կուզէ, ջրբաշն իր բահի յուժկու հարածով ջուրը շո՛ւտ կու տայ դէպի քո այգին տանող առուն: Ջուրը բերանն առած չոր սէզեր ու խոտեր, պղպջալէն ու խոխոջելէն, կը նետուի այգին ու ածուները: Վարագայ սարէն լուսինը կը բարձրանայ: Ջրի կարօտն տոչորած այգին հանգստացրէ է ու հիմա ջուր կործայ: -Չըլ՛փ, -կը լսէր ճողփիւններ հեռէն ու մօտէն, հասած ծիրանն է, վաղահաս տանձն ու խնծորը, որ կաթուկ կանեն ջուրած ածուներուն մէջ...

-Պիտի ապրի՝ Վանն իր աշուններով, երբ վանքերէն ու գիւղերէն ցորենը, ալիւրը, հազար բերք ու բարիք քաղաք կը լեցւի, երբ եկեղեցիների զանգերը անուշ կը դօղանջեն, երբ աշակերտներ աղմուկով դպրոց կը շտապեն, երբ...

Պարոն Գեորգը լռեց, նա օղու մնացորդը քամեց եղբոր բաժակի մէջ եւ գլուխը կախեց. երեւի նա յիշեց դպրոցը, իր դպրոցը, մասնաւորապէս, այն ճակատագրական օրը, երբ նա, տարիներ առաջ, ամօթահար դուրս եկաւ դպրոցից եւ անվերադարձ... նա գլուխը բարձրացրեց եւ կանչեց.

-Լիա՛, ախչի, Լիա՛...

-Լիան տուն չէ, ի՞նչ կայ,- փափկութեամբ հարցրեց Օհանէս աղան, ամբողջովին տարած իր «փուճ-փճանալու ծաղիկ» եղբոր պերճախօսութեամբ:

-Սուրէն,- չյուսահատուեց պարոն Գեորգը:

-Սուրէնն էլ չկայ:

-Ո՞ր են,- զարմացաւ եղբայրը:

-Շտաբ: Շտաբի անդամ են, - պատասխանեց Օհանէս աղան, չգիտես հպարտութեամբ թէ հեզմանքով:

-Կատակ մի՛ ըներ,- ժպտաց պարոն Գեորգը:

-Ի՞նչ կատակ, գրեթէ բարկացաւ Օհանէս աղան,- կռիւ ժամանակ կատակ կանեն... Լիան զինուորների համար չամաշուր կը կարի, Սուրէնը դիրքից դիրք կը վազի...

-Սուրհանդա՞կ:

-Կերեւայ:

-Մաշալլա՛հ, օրիորդ Լիա, մաշալլա՛հ, պարոն Սուրէն, դէ ասա Սաթենիկին օղի տայ, խմենք Վանի կենաց, Լիայի կենաց, Սուրէնի կենաց...

Օհանէս աղան դէմ չէր. միայն նա մտքում ինքն իրեն հարցրեց.- յանուն ինչի՞... - Եւ պատասխանեց.- յանուն նրա, որ աշխարհի աշխարհով անցեր է, իսկ այս մարդն իրեն զբաղեցնում է իր պերճախօս լեզուով, իր բանիմացութեամբ: Միայն թէ,- շարունակեց մտածել Օհանէս աղան,- հարկաւոր է օղին աւելի՛ արժեցնել, ստանալով աւելի բարձր որակի իմացողութիւն: - Եւ ասաց Օհանէս աղան.

-Օղու գործ դիւրին է, բայց դու, իմ կարծիքով, ճիշտ չես տաներ քո ճառաբանութիւնը...

-Ինչպէ՛ս,- վրդովեց պարոն Գեորգը,- քանի՛ տարի է այս ճառը տնէ տուն, սեղանէ կը պտտցնեն, ամենուր հիացնունքի խօսքեր միայն լսած են, դուն ելեր ես...

-Տեսա՞ր,- անկեղծօրէն ոգեւորեց Օհանէս աղան,- Աւետարանի ասածով՝ ի բերանէ քունմէ՛ քե՛զ դատեցար...

-Այդպէս չէ,- առարկեց պարոն Գեորգը:

-Միտքը այդ է, -ծայնը բարձրացրեց անողոք եղբայրը,- խաղաղ ժամանակ դուն տնէ տուն, սեղանէ սեղան պտտցուցեր ես քո այդ ապրանքը, իսկ հիմա, երբ կռիւ է օրհասական, դուն ելեր ես քո փաստաւորապէս պարանքը ի՞նձ կը կլլեցնես...

-Ինձ լսէ,-խղճացաւ հռետորը:

-Ոչ, դու՛ ինձ ականջ արա. դու

կասես, որ գարուն կու գայ, ձիւն կը հալի, ծաղիկներ կը ծաղկեն, թռչուններ կերգեն, ամառ, որ եկա՛ւ պտուղներ կը հասնեն, այգիներ կը ջրեն, իսկ ծառերից տանձ ու խնձոր կաթուկ կանեն, Ֆլամ-Ֆստան: Է՛, Ռուսաստան, ինգիլիզներու կամ առնաուտներու երկրի մէջ գարուն, որ գայ ձիւնը չի՞ հալէ, ծաղիկներ չե՞ն ծաղկէ, թռչուններ չե՞ն երգէ... ամառ, որ եկաւ ուրիշ երկրների մէջ պտուղներ չե՞ն հասնէ, այգիներ չե՞ն ջրէ, ծառից տանձ ու խնձոր շրփալով չե՞ն ընկնէ ջրի մէջ... դու կասես՝ ստեպղիների հոտ, ստեպղիներ ի՞նչ է, որ նրա հոտն ինչ էլնի... Է՛, մենակ Վանի սեխից ու ձմերուկի՞ց սեխի ու ձմերուկի հոտ կուգայ... Կասենք Վան, Վան, է՞ս է քո Վան... Աշուն, որ գայ՝ գիւղերից ցորեն, ալիւր կը բերեն քաղաք, է՛, ուրիշ երկրներ գարնա՞ն կամ ամառա՞ն ցորեն կը ստանան: Աշխարհի վրայ հազար քաղաք կայ, քաղաքների մէջ եկեղեցիներ, ամեն տեղ եկեղեցիները զանգեր ունեն եւ ամեն տեղ զանգակներ կը զնգզնգան, աշակերտներ դպրոց կերթան... է՞ս է քո Վան, Վանի գարուն, ամառ, աշուն...

-Թող վերջացնեն, նոր քննադատէ, եղբայր,-բարկացաւ պարոն Գէորգը ոչ միայն նրա համար որ Օհանէս աղան անողոք կոպտութեամբ ոտնատակ արեց ու պսակազրկեց իր ստեղծած ռոմանթիկան, այլեւ նրա, որ օղու դատարկ շիշը նայում էր իրեն ասես հեգնանքով: Նա զղջաց, որ օղու մնացորդը քամեց եղբոր բաժակում: Նրան գրգռում էր եղբոր լեցուն բաժակը:

-Կուզե՞ս քո փոխարէն շարունակեն քո ատենաբանութիւն,- շարունակեց Օհանէս աղան՝ զարմացած իր հակաճառելու կարողութեան վրայ,- պիտի ապրի Վանն իր ձմեռներով, երբ այգեստաններն ու Վարագայ սարը ծածկւած են ձիւնով, երբ երդիկներէն ու ծխնելոյզներէն ծուխ-մուխ կը բարձրանայ դէպի երկինք, իսկ տաք քուրսու շուրջ նստած ընտանիքի մեծ ու փոքր անդամները չամիչ, մոխուղ կուտեն եւ «դէ կաման» կերգեն... ա՞յս է քո Վանը...

Մառանից դուրս եկաւ Օհանէս աղան՝ լեցուն շիշ կոկորդից ամուր բռնած, որ չճչայ, որ Սաթենիկը չլսի

շիշ ճիչը: Զգուած օրէնք է. կանայք չեն սիրում, երբ ամուսինները խմում են այնպէս, առանց առիթի, երբ ոչ հարսանիք է, ոչ մեռելաթաղ:

Օհանէս աղան թողեց հողաթափերը հնամաշ գորգի եզրին, նետեց իր տեղը, նստեց ծալապատիկ եւ շիշը դրեց վարդի սեղանին: Ժամանակաւորապէս պարտւած ատենախօսն զգաց, որ պէտք է դիմել իր մտաւոր պաշարների պահածոներին: Նա յիշեց Դիմ Կտակարանը: Կրօնից նա միշտ հինգ ու խաչ ուներ աշակերտական տարիներին: Վերջապէս այդ կրօն կոչւածն իրեն մի անգամ պէտք եկաւ:

-Սկսեց հինէն: - Նա աչքը փակեց եւ բերանը բացեց: - Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակոբ, Յակոբ ծնաւ զՅովա, Յովա ծնաւ զՓարէս, Փարէս ծնաւ զԵզրովն, Եզրովն ծնաւ զԱրամ...

-Արա՞մ, - զարմացած հարցրեց Օհանէս աղան:

-Ի՞նչ կայ զարմանալու, պատմութեան մէջ եւ պատմութիւնից դուրս՝ հազարաւոր արամներ կան:

- Պատմութեան մէջ հասկացանք, պատմութիւնից դուրս որն է, - խնդրի մէջ խորացաւ Օհանէս աղան:

-Բացատրեն. օրինակի համար՝ կայ Արամ փաշա... եւ կայ Սապունջունց Արամ, ճի՞շտ է...

-...ճի՞շտ...

-Արամ փաշան, այսպէս թէ այնպէս, պատմութեան մէջ է, իսկ Սապունջունց Արամը, որ դարձեալ Արամ է, պատմութեան մէջ չի՞ սեպիիր:

-Եղաւ: Դիմա ես ու դու պատմութեան մէ՞ջ ենք, թէ՞ պատմութիւնից դուրս...

-Նայած: Նայած թէ ո՞վ կը գրի պատմութիւնը... Յետ գերութեան բարեկացուց ծնաւ Յեքոնիայ զՍահաթէլ, Սահաթէլ ծնաւ զՉորաբաթէլ, Չորաբաթէլ ծնաւ կարծես զԵղիազար, Եղիազար ծնաւ զՄարթան, Մարթան ծնաւ զՅակոբ, որ անւանեցաւ Քրիստոս: Այն ժամանակ լուսանկարիչ Չեթոտենց Արշակ չկար, որ լուսանկարեր Յիսուսին, ուստի հայոց Աբգար թագաւորը սպիտակ փաթիսկակտոր սուրհանդակի միջոցով դրկեց Յիսուսին, Յիսուսն այդ կտորը քաշեց իր երեսին եւ այնտեղ

տպեց Յիսուսի կերպարանքը: Աբգար թագաւոր այսպիսով ստացաւ Յիսուսի պատկերը, քրիստոնէութիւն ընդունեց եւ կռապաշտ հայերի մէջ քրիստոնէութեան փրօփազանդըրաւ...

-Այն ժամանակ Վան քաղաք կա՞ր,- հարցրեց Օհանէս աղան:

-Վանը երկու հազար տարեկան էր, երբ Քրիստոսը ծնաւ:

-Տեսա՞ր,- ուրախացաւ Օհանէս աղան, - իսկ թուրքեր...

-Ի՞նչ թուրք, այն ժամանակ ո՞չ թուրք կար, ո՞չ ռուս, ո՞չ Ֆրանսա, ո՞չ Անգլիա...

-Ամերիկա՞:

-Այնտեղ մարդակեր վայրենիներ կապրէին:

-Բացի Վանի հայերից, ուրիշ ո՞վ կար աշխարհի վրայ:

-Հռոմայեցիք, բիւզանդացիք, Եգիպտոս, Ասորեստան, Բաբելոն, Գաղտիա, Պարսկաստան եւ ուրիշ անկիրթ ազգեր... Հայաստան կրթւած երկրների շարքին կը պատկանի... յորմէ հետէ...

-Յորմէ հետէ՞...

-Եկան թաթարներ, սելջուկներ, Թեմուր Լանգ... Հայաստանի թագաւորներ դաշինք կնքեցին Բիւզանդիոնի հետ, Պարսկաստանի հետ վատամարդ եղան, փորձեցին Պարսկաստանի հետ լեզու մը գտնել, բիւզանդացիք արշաւեցին Հայաստանի վրայ... անելանելի կացութիւն, անտանելի դրութիւն:

-Է՛, թող դաշինք չկնքէր, թող լեզու չգտնէր, թող չէզոք ապրէր եւ արհեստներով զբաղէր, տնտեսութիւն ծաղկեցնէր,- բարկացաւ Օհանէս աղան:

-Միւս կողմից, հայ իշխաններու, նախարարներու եւ նախարարապետներու մէջ եղած անհամաձայնութիւնները...

-Այն ժամանակ ա՞լ կուսակցութիւններ կային:

-Չկայ ազգութիւն առանց կուսակցութիւններու:

-Ի՞նչ խայտառակութիւն:

-Այսպիսով, մէկ կողմէն Արեւելքի եւ Արեւմուտքի ոտքերուն տակ, միւս կողմէն մերքին կռիւներէն հոգեպէս, մտաւորապէս եւ մարմնապէս թուլցած Հայաստանը գոյնը նետեց, փոքրացաւ, երեսունհինգ միլիոնէն

իջաւ երեսունի, քսանի, տասի, հինգի, հինգէն իջաւ-հասաւ... չեն գիտներ ո՞ւր հասաւ, զատկական կարմիր հաւկիթները Չատկի առաջին օրը չեն հաշներ... Երկիրն ալ վրայ տաւ, անկաւ ռուսաց եւ թուրքաց մանգանի տակ...

-Ի՞նչ սարսափելի պատմութիւն,- բացականչեց Օհանէս աղան,- այդքան բան որ դու գիտես, ինչպէ՞ս կարող ես գիշերները հանգիստ քնանալ:

-Ես ալ կը զարմանամ. միւս կողմէն չիմացութիւնից մարդը կարող է կորցնել քունը... Երբ ամէն բան գիտեմարդը, կարող է ալ հանգիստ քնանալ: Նայած, նայած հանգամանքին, պարագային...

Ոչ միայն Օհանէս աղան, ինքը պարոն Գեորգը, նոյնպէս զարմացած էր մնացել իր բանիմացութեան եւ պերճախօսութեան վրայ, զարմացել էր այն աստիճանի, որ անյարմար էր համարում վերցնել շիշը եւ օղի լցնել եղբոր եւ իրեն համար, հարկ էր, որ եղբայրը, զգալով վերջապէս պարոն Գեորգի գերազանցութիւնը, լեցնէր բաժակները: Գալով Օհանէս աղային, նրա մտքերը եւ հեռու էին, եւ մօտ. նա մտածում էր հայ ժողովրդի պատմական անցեալի, նրա սեւ ճակատագրի, ներկայի (բ՛նձ-բ՛նձ- տրա՛ք-տրա՛ք-զ՛գ՛գ՛...) եւ անյայտ ապագայի մասին:

-Չխմե՞նք,- հարցրեց պարոն Գեորգը ի միջի այլոց եւ այնպիսի ձեւով, որը նշանակում էր.- ես շատ իշտահ չունենմ, քեզ համար եմ ասում...

-Խմենք,- ասես ուշքի եկաւ Օհանէս աղան,- էսօր որ չխմենք, էլ ե՞րբ պիտի խմենք... - նա վերցրեց շիշը, եւ կեանքում առաջին անգամ լինելով, լեցրեց եղբոր բաժակը: Պարոն Գեորգը վերցրեց բաժակը մեծ արժանապատւութեամբ, դրեց ծնկին եւ ասաց.

-Կռիւր, աւելի ճիշտը՝ կռուող կողմերու ուժերն անհաւասար են: Չէվդէթը զէն ու զօրքով մի քանի անգամ աւելի ուժեղ է, քան մենք: Բայց մենք աւելի բարենպաստ պայմանների մէջ ենք, որովհետեւ անոնք են յարձակողները: Իսկ մենք պիտի պաշտպանուենք: Մենք մեր դիրքերու մէջ ամուր պիտի մտնենք, ամոնք են, որ պիտի դուրս գան դիրքերէն եւ

աշխատեն խել մեր դիրքերը եւ խուժել քաղաքը: Եւ վերջապէս անոնք Չէվդէթ ունեն, որ կարող է ամէն ժամ իր չէքաներով թողնել հեռանալ, իսկ մենք՝ մեր տունն է, որ կը պաշտպանենք, կամ պիտի մեռնենք, կամ յաղթենք: Եւ որովհետեւ մեռնելն աւելի դժար է, քան յաղթելը, պէտք է նախընտրել յաղթելը: Վանը պիտի յաղթէ: Ահա՛ մեր վերջին խօսքը:

...Ուշ գիշեր է: Օհանէս աղան նստած է տանտանը, իր անկիւնում, այնտեղ, ուր ցերեկով եղբոր հետ երկու շիշ օղի ճնկելով ճնկեցին, ունկնդիր մօտ ու հեռու հրազէնների պայթիւններին, եւ կռիւ առաջին օրւայ անցուդարձերի քաղաճքն է անում, չխչխկացնելով համրիչի դեղին հատիկները:

-Լաւ,- ասաց Օհանէս աղան՝ օղու դատարկ բաժակը տեղը դնելով,- էս որ կասես հայրենիք, հայրենիք, ի՞նչ բան է հայրենիք ըսւածը: Հայրենիք լաւ է, որ ապահովութիւն լինի, լիութիւն, առատութիւն, վաճառակաւնութիւն ծագի, արհեստներ բազմանան, հօտեր, նախիրներ լեցնեն արօտատեղիներ, կեանքի աճանութիւն լինի, «Հին աստուածներ» խաղան, նարդի շրխկացնեն... հայրենիք ասածդ այս պէտք է լինի: Իսկ ի՞նչ հայրենիք է մեր հայրենիք, թշուառական, անտէր, թշնամուց ոտնակոխ, յափշտակութիւն, բռնաբարութիւն, խուզարկութիւն, սպանութիւն, ջարդ... էս էլ եղաւ հայրենիք... չունենամ էսպէս հայրենիք: Ինչի մման է էսպէս հայրենիք: Ապրել բռնութեան տակ, անապահով, քաղցած, անունն էլ դնել «հայրենիք»: Սխալ գործ է: Որտեղ հաց՝ այնտեղ կաց, որտեղ հաց՝ այնտեղ հայրենիք,- այս է տրամաբանութիւն: Ահա՛, հայրենիք,- Օհանէս աղան ձեռքը պարզեց աջ ու ձախ, ակնարկելով կրակոցները,- ա՞յս է հայրենիք... շ... այսպիսի հայրենիքի մէջ,- ծայնը բարձրացրեց Օհանէս աղան եւ լցրեց բաժակները յուզմունքից դողացող ձեռքով,- չուզեցինք, վաճն եկանք, հրաժարիմք ի սատանայէ... Ո՞ւր է իմ խանութ, ո՞ւր է մեր կալածներ: Երէկ կար, այսօր չկայ, էս ի՞նչ զարմանալի հայրենիք է...

-Այսուամենայնիւ՝ այս է հայրենիք,- ծանրակշիռ ու հեղինակաւոր

արտասանեց պարոն Գեորգը եւ լռեց:

-Ա՞յս է,- բարկացաւ, գրեթէ շատ բարկացաւ Օհանէս աղան, կարծես նրան հասանելիք հարիւր հնչուն ոսկու փոխարէն՝ նրա ձեռքը դրել էին մի քանի դուրուշ:

-Այո՛, այս է, յամառեց եղբայրը:  
-Ռոտով գլխով քեզի ըլլայ, անվարտիքներու, անօթիներու հայրենիք...

-Այսուամենայնիւ՝ հայրենիք...  
-Ախ,- ողբաց Օհանէս աղան,- ինչո՞ւ ժամանակին ապրանքներս ու հողերս դեղին ոսկու չվերածեցի եւ դուրս չեկայ այս տարտարոսէն...

-Դուրս եկողներն ի՞նչ շահեցին:  
-Իսկ ի՞նչ կորուսին:

-Այդ հարցին պատասխանելու համար յիշենք Համբարձումի վերջին նամակը:

-Չանըմ, -բարձրաձայնեց Օհանէս աղան, -Համբարձումն ի՞նչ օրինակ է, որ դուն մէջտեղ կը հանես: Մարդը փորձանքի մէջ ընկաւ...

-Եթէ Վանէն չհեռանար, այդ փորձանքին չէ՞ր հանդիպէր,- չէ՞ր հանդիպէր...

-Այդ փորձանքին չէր հանդիպէր, այս փորձանքին կը հանդիպէր, մէկ չէ՞... դեռ եթէ կուզես՝ աւելի լաւ է *այդ* փորձանքը, քան *այս*...

-Ճաշակի խնդիր է,- առարկեց պարոն Գեորգը, -ես աւելի կը նախընտրեմ մեռնել Վանի պաշտպանութեան դիրքերու մէջ, քան Պոլսոյ մէջ՝ ամօթալի հիւանդութեամբ...

-Ապա ինչո՞ւ չես մեռնիր, -չարացաւ Օհանէս աղան:

-Ինչէ՞ն գիտես, որ չպիտի մեռնեն,- տեղից վեր կացաւ պարոն Գեորգը հանդիսաւոր արժանապատւութեամբ, կեանքում առաջին անգամ, կիսատ թողնելով օղին: Նա շարժեց դէպի դուռը եւ՝ «մնաս բարով», - ասաց: Օհանէս աղան յանկարծակիի եկաւ այս վերջաւորութիւնից: Նա ուզեց վեր կենալ եւ, եղբոր մէջքից բռնելով, ետ բերել, նստեցնել կողքին եւ շարունակել, ոչ, սկսել նոր զրոյց, հարցնել, թէ որտե՞ղ է թաղւած Շամիրամ թագուհին, ո՞վ էր Նաբուգոդոնոսոր արքան...



# ԹԵ Ի՞ՆՉ ՍՈՎՈՐԵՑԻ ՍՏԱՅԱԾ ՔԱՂՅԿԵՂԻ ՎԱՆԽԻՑ

Դոկտ. Միհմեթ Օզ

Ես մի ականաւոր բժիշկ եմ: Ես միլիոնաւոր մարդկանց խորհուրդ եմ տւել, բայց այնպէս ստացւեց, որ ինքս յայտնւեցի մի կամակոր հիւաղի դերում:

Ես կանգնած էի Նիւ Եօրքի կենտրոնական մասում մեքենաների երթելակութեան մէջ, բայց այդ պահին իմ միտքս բոլորովին ուրիշ ուղղութեամբ էր աշխատում, մտածում էի, որ մահկանացուն ի՞նչ կարող է անել:

Ես գնում էի ինձ բուժող բժշկի գրասենեակը, որպէսզի հաստ աղիքի ստուգման ենթարկուի: Սա իմ երկրորդ այցն էր անցեալ 9 ամիսների ընթացքում: Իհարկէ պէտք չէ, որ այդ ստուգումը 9 ամիս անց կրկնել, միթէ այն, որ անհանգստութեան ինչ-որ պատճառ լինի: Իմ խնդիրը վերադառնում է Օգոստոս ամսին, երբ իմ բժիշկը մի կասկածելի պոլիպ (polyp) հեռացրեց իմ հաստ աղիքից: Դա մի նախաքաղցկեղային ուռուցք էր, որոնք յաճախ քաղցկեղային չեն դառնում: Սակայն չպիտի մոռանալ, որ մեծ մասամբ հաստ աղիքի քաղցկեղը առաջանում է հէնց այդ կարգի պոլիպներից: Իմ կեանքից դեռ մնացել էր երեւի 40 աշխոյժ տարիներ, սակայն այս դրութեամբ մի քանի տարի աւել ինձ համար չէր մնացել: Ես մի կերպ կեանքս շարունակում եմ. դա կը տւելի մէկ կամ երկու տարի: Դուք ինձանից գոյատեւման վերաբերեալ շատ հարցեր էք տալիս, օրինակի համար՝ երբ դուք տեղեկանում էք այն հիւանդութեան մասին, ինչը ես իմ

բժշկից իմացայ, յետոյ դուք էլ վերադառնում էք եւ շարունակում ձեր ստուգումները: Կարելի է բոլորի արդիւնքն էլ լաւ լինի եւ բարդութիւնը շատ հեշտութեամբ վերանայ: Ներկայումս ես գնում եմ, որ հետեւեմ այդ ստուգումներին: Վստահաբար ես կը ստանամ բոլոր ստուգումների արդիւնքը, որ նրա դրական պատասխանը կը լինի այն, որ իմ կեանքը կը վերադառնայ այնտեղ, ուր սկսել էի եւ նոյն այն ուղղութեամբ, որ կար:

Իմ բժիշկն ստուգման ընթացքում մի ուրիշ նոր պոլիպ գտաւ հաստ աղիքի վերին եւ աւելի վտանգաւոր մասում:

Ես բժիշկի գրասենեակից դուրս եկայ եւ մի պահ կագնեցի փողոցում: Մտքում պայքարում էի այդ չարաբաստիկ լուրի դէմ: Փողոցի մարդկանց իրարանցումն ու շտապ քայլերն էի դիտում եւ մտածում, որ շրջապատիս այդ բոլոր քայլողները զերծ են այդ սոհած երեւոյթից, որին ես եմ գերի դարձել: Բայց իրականութեան մէջ այդ խնդրում ես մենակ չէի. Ես ունէի ինձ նման միլիոնաւոր մարդկանց Ամերիկայի տարածքում. Ես բժշկական վիճակագրութեան մարդկանցից մէկն եմ, որ ստանում եմ նման կարգի ախտորոշումներ:

Իմ բժշկական աշխատանքում ես ամէն օր եւ ամէն տարի այդ

կարգի ախտորոշումներ էի կատարում, իսկ այժմ ես միանում եմ այդ բազմաթիւ մարդկանց: Եւ դա մեր աշխատանքի սահմանած կարգն է:

Բայց այդ բոլոր պատմութիւններն այն պարագայում է, երբ դէպքը ձեզ չի վերաբերում:

Եթէ այդ դէպքը վերաբերում է ձեզ, ձեր մտքի մէջ արագ զարգանում են մտքեր եւ ձեզ մօտ հարց է առաջանում, թէ դուք ենթարկւել էք մի տեխնիկական վթարի եւ մտածում էք, թէ արդեօ՞ք դուք կատարել էք ձեր կեանքում բոլորովին մի տարբեր եւ անսովոր աշխատանք:

Չգիտեմ այս վիճակում ի՞նչ ասեմ իմ կնոջն ու երեխաներին: Իսկապէս, եթէ ստուգումների պատասխանը քաղցկեղ լինի, մտածում եմ, արդեօք ինչ-որ բան կատարե՞լ եմ կեանքում, կատարել եմ թէ՞ ոչ: Ես մի բժիշկ եմ, որ մարդկանց խրախուսում եմ առողջ ապրել: Ես իմ կեանքի մեծ մասը օգտագործել եւ զովաբանել եմ առողջ կերպով պատրաստած ուտեստներն ու նրանց կարելութիւնը եւ կանոնաւոր մարզանքներ եմ կատարել: Այդ երկու բաները երբեք չի բացակայել իմ կեանքում եւ զարմանում եմ, թէ ինչո՞ւ է այդ դէպքն ինձ հետ պատահել: Այդ հարցի պատասխանը մասամբ հետեւեալն է, որ մեզ



մօտ պակասում է առողջ ապրելակերպը, որին հետևելով է, որ կտրուկ կերպով կը նւագի քաղցկեղի ռիսկը մեր կեանքում:

Բայց դա էլ պիտի ասել, որ թէև ոչ մի բան հաստատապէս երաշխաւորած չէ, այնուամենայնիւ դա կապ ունի մարդկանց ապրելակերպին. Օրինակ, ե՞րբ եւ ինչպէ՞ս են սովորել իմ կեանքի պարտականութիւնները: Ես հպարտ եմ, որ եղել եմ մի լաւ բժիշկ եւ լաւ ընտանիքի հայր, բայց փաստերը ապացուցում են, որ ես մի վատ եւ անտանելի հիւանդ եմ եղել կեանքում:

Կեանքս անցկացնում էի անվճար աշխատելով հեռուստատեսութեան համար, դա կատարում էր ամէն օր եւ այդպիսով հեռուստադիտողներին ծանօթացնում էի բժշկական եւ առողջապահական խնդիրներին: Այդ ամէնօրեայ աշխատանքն ինձ համար մի ահաւոր պարտականութիւն էր դարձել եւ նոյնիսկ ստիպողական բնոյթ էր կրում: Ազնւօրէն պիտի խոստովանեմ, որ ես իմ աշխատանքի ընթացքում որոշ սխալներ էլ գործել եմ: Այդ որոշ սխալները կարելոր չէին, բայց կարելի է ասել, որ բաւական չափով դրանք սպառնում էին իմ առողջութեանը, դա ազդում էր իմ ապագայ կեանքի եւ իմ բարոյական պարտականութիւնների, իմ ընտանիքի վրայ: Այդ փորձառութիւնն ինձ փոխանցեց բժիշկ Օզը շատ պարզ ու յստակ կերպով: Պրն. Օզը շատ բաներ է սովորեցրել ինձ եւ իմ հիւանդներին:

## 50 տարւայ հեքիաթային կեանք

Պատմութիւնն սկսեց մօտաւորապէս մի տարի առաջ, երբ ես սօնում էի իմ ծննդեան 50-րդ տարեդարձը մեծ հաւաքոյթով՝ ընտանիքիս, բարեկամներիս ու ընկերներիս հետ, որ նրանցից շատերը բժիշկներ էին: Ես շատ հպարտ էի, որ նշում էի իմ կենդարեայ կեանքի

տարիները. այդ առիթով ես ծրագրել էի հաստ աղիքս ստուգման ենթարկել: Դա մի ստուգում էր, որ ես միշտ կանոնաւոր կերպով իմ հիւանդներին առաջարկում էի եւ միշտ դա խանդավառութեամբ էի առաջարկում հիւանդներիս, որպէսզի նրանք հանգիստ զգային:

Իրականութեան մէջ ես անց էի կացրել կեանքիս կէտը եւ այդ միտքն իմ մէջ զարգացրել էր, որ իմ հաստ աղիքն ստուգող մասնագէտն ինձ սպասում է կոլոնոսկոպի անելու: Մասնագէտը եւ որոշ հիւրեր ինձ առաջարկեցին այդ ստուգման ընթացքը ներառել իմ ծրագրի մէջ, որպէսզի դիտողները կարողանան տեղեակ լինել եւ իմանալ, թէ այդ ստուգումն ինչքան հեշտ եւ պարզ գործողութիւն է: Համաձայնեցի, որ համապատասխան հիմնական գործերը կատարեմ, եւ անցնեմ նախապատրաստական աշխատանքներին: Այդպիսով այդ ստուգման ծանրութիւնը վերջինն էր իմ մտքում. իրապէս եթէ ես ուզում էի, ինքս ինձ հետ անկեղծ լինել, չափի ցուցանով լինէի եւ 50-ամեակիս օրը ստուգման ժամկէտը նշանակէի: Բայց ես հակառակ իմ համոզման, մանաւանդ որ ոչնչից էլ չէի վախենում, մի տարբեր ելք գտայ՝ հետաքրքրասիրութիւնս բաւարարելու համար: Նախօրօք ես լաւատեղեակ էի, որ ստուգումից 36 ժամ առաջ պիտի ոչնչ չուտել, բայց զննումից ճիշտ 18 ժամ առաջ մի քանի պատառ ուտելիք կերայ. դէ՛, դա ի՞նչ ազդեցութիւն պիտի ունենար ինձ նման առողջ մարդու վրայ: Այս խնդիրը ես լիովին գաղտնի պահեցի իմ բժշկից, նոյնիսկ յաջորդ օրն էլ, հաստ աղիքիս ստուգման արդիւնքը յայտնելիս, դարձեալ լռեցի այդ պատառներն ուտելու մասին:

Հաստ աղիքի ստուգման՝ կոլոնոսկոպիի համար յաճախ մարդիկ բողոքում են ընդհանուր անզգայացումից: Մի ուրիշ կերպ էլ

կայ, որ միայն ցաւազրկում են որոշ հիւանդներին: Ընդունած ու աւելի ցանկալի եղանակը մարմնի որոշ մասերի, (որոնք ենթարկւում են վիրահատութեան) անզգայացումն է: Ես ընտրեցի վերջին տարբերակը: Սկսեց զննումը եւ ես կարող էի մոնիտորի էկրանի վրայ տեսնել ամբողջ մանրամասնութիւնները: Բժիշկ Ջոն Լափոքը սկսեց դժգոհութիւն յայտնել իմ անպատրաստութեան համար: Իմ հաստ աղիքում բուսեղէն ուտելիք կար, դա էլ մի օր առաջայ իմ կերածն էր: Բժիշկ Լափոքն ինձ նկատողութիւն արեց, որ ես լիովին չեմ յարգել նրա կարգադրութիւնները, բայց նա ամենայն վարժութեամբ կատարեց իր ստուգումը: Ես էլ այդ պահին մի հիւանդի դերում էի յայտնել:

Երբ բժիշկը մոնիտորին էր նայում, ինձ ասաց, որ մի կասկածելի պոլիպ է գտել, որը պիտի հեռացնի աղիքիցս, ես հայեացքս ուղղեցի դէպի մոնիտորի էկրանը եւ նկատեցի արցունքի կաթիլ չափ մի նուրբ հիւսւածք, որը կաշել էր աղիքիս պատին: Մի ակնթարթում յուզմունքս փոխարինեց խոկումի ու տրամաբանութեան: Իրօք դա նման էր մի նախաքաղցկեղային ուռուցքի: Բայց դա անհնար էր, քանի որ ես շատ ժուժկալ կեանք էի վարել: Այժմ իրօք ես սկսեցի սարսափել. ամիմաստ մի գայրոյթ պաշարեց ողջ էութիւնս:

Բժիշկ Լափոքը քերթեց պոլիպը եւ աղիքիցս հեռացրեց այն եւ նմուշն ուղարկեց ախտորոշման տարրալուծարան: Դժբախտաբար օրն ուրբաթ էր, որին յաջորդում էր շաբաթ եւ կիրակի արձակ օրերը, ուստի պիտի սպասէի մինչեւ երկուշաբթի՝ զննման արդիւնքն ստանալու համար:


## Երկար սպասում

Այդ շաբաթավերջի արձակուրդը վստահ կարող եմ ասել, որ ամենազգւելի օրերն էին, որոնք երբեւէ ունեցել էի այս վերջին քա-

նի տարիների ընթացքում: Ես մարդկանց փոխանցում էի տհաճ լուրեր եւ դառնութիւններ, այժմ ինքս էի մաշկիս վրայ զգում այդ նոյն դառնութիւնները: Նստում էի եւ սպասում հաստ աղիքիս վերցրած նմուշի ստուգման արդիւնքին, որ դա անտանելի սպասողական դրութիւն էր: Ամէն մի ծնող կամ մասնագէտ եւ կամ պաշտօնեայ տեղեակ է իր պարտականութիւններին, լինի դա միայն տանը կամ աշխատանքի վայրում: Երբեք այդ աշխատանքը մի դադարեցրէք այն պատճառով, որ մտահոգւած էք կամ մտամոլոր:

Այդ երկու օրւայ ազատ ժամերին, ես ուսումնասիրեցի իմ բժշկական քղթածրարը. դա հիւանդութիւնն ստուգելու ամենալաւ միջոցն էր: Պոլիպը հիպերպլաստիկ բաղադրութեամբ մի ուռուցք է, որը մաշկի յատկութիւն ունի, եւ երբեք դա վնասակար չէ եւ ինձ էլ չի վնասի: Վատագոյն դէպքում այն կարող է չարորակ մի ուռուցք լինել, եւ քաղցկեղը տարածւէր հաստ աղիքում: Այդ դէպքում բժիշկները պիտի հաստ աղիքս ամբողջապէս վիրահատման ենթարկեն եւ մարմնիցս հեռացնեն:

Վերջապէս հասաւ երկուշաբթի առաւօտը եւ բժիշկ Լափոքն ինձ զանգահարեց եւ հրաւիրեց իր գրասենեակը: Ես անմիջապէս իմացայ, որ այդ այցելութեամբ կարող եմ մտքիցս հեռացնել այս սցենարի կարեւոր մասը: Ընդհանրապէս բժիշկները բարի լուրերն իրենց հիւանդներին հեռախօսով են յայտնում, բայց վատ լուրերի փոխանցումը տեղի է ունենում իրենց ներկայութեամբ, որպէսզի ուղղակի կարողանան նրանց առաջարկներ ներկայացնել: Մենք նստեցինք իրար դիմաց: Նա ինձ ասաց, որ իմ հաստ աղիքի պոլիպը չարորակ է եւ ընդունակ է քաղցկեղի վերածելու: Դա պատկանում է այն տեսակին, որից տառապում է Ամերիկայի բնակչութեան 5%: Դրա



**Բժիշկն ինձ ասաց, որ իմ հաստ աղիքի պոլիպը չարորակ է եւ ընդունակ է քաղցկեղի վերածելու:**

վտանգն աւելի շատ է, եթէ մօտիկ հարազատներից մէկն էլ տառապած լինի այդ հիւանդութեամբ (ժառանգական լինի), գեր լինելն ու ծխախոտ ծխելն էլ մեծացնում է վտանգները, որ դրանք ինձ մօտ բացառւում էին: Ընդհանրապէս իմ հարազատներից ոչ մէկի մօտ նման վտանգաւոր պոլիպներ չէին տեսնւել:

Այդ հարցը մեզ տանում է դէպի միւթերի կրկնողութեանը: Ձեզանից ամէն մէկդ այդ կարծիքին էք,

որ դուք աւելի առողջ էք, քան ես: Այդ նոյն կարծիքին էի նաեւ ես իմ առողջութեան վերաբերեալ:

Շատ մարդիկ ունենալով մի նախաքաղցկեղային պոլիպ, սակայն կարող է ռիսկի ազդակ չունենան. եթէ ես էլ իմ ծննդեան տարեդարձի օրը ստուգման որոշում կայացրած չլինէի, հեշտութեամբ կարող էի անցնել նրանից, բայց շատ ուշացումով ես պիտի ենթարկւէի մի լուրջ վիրահատութեան եւ հաւանական էր, որ են-

թարկւելի քիմիաթերապիայի եւ դրանից տհաճն այն էր, որ կարող էր մի արհեստական խողովակ միացնելին աղիներին, որպէսզի օրգանիզմն մաքրւէր կեղտերից ու վնասակար տարրերից:

Բժիշկ Լափոքի գրասենեակից ես զանգեցի կնոջս՝ Լիզային: Նա ամենայն հանգստութեամբ լսեց իմ ստուգման արդիւնքի մասին: Երբ ես տուն հասայ, տեսայ Լիզան արդէն գնել եւ ինձ համար պատրաստել էր պոլիպի փոքրացնելուն նպաստող բանջարեղէն:

Մեզանից իւրաքանչիւրը տարբեր ձեւեր ունի դժւարութիւնները յաղթահարելու համար: Ուժեղ մարդիկ երեխաներիս ասում էին թէ իմ հիւանդութիւնը շատ ծանր չէ, վերջապէս ես դեռ ծնկի չէի եկել, բայց նրանք լաւատեղեակ էին պոլիպի առաջ կանգնած ռիսկին: Նրանք եւս պիտի ենթարկեմ ստուգման, չնայած որ նրանք 10 տարի աւելի երիտասարդ են ինձանից: Ես իմ ընկերների միջոցով խրախուսեցի առաջին անգամ ստուգման ենթարկել:

Ես ունեմ չորս երեխաներ: Նրանցից ամենակրտսերը 12, իսկ աւագը՝ 25 տարեկան է: Մեքենայ վարելիս, երբ օդանաւակայան էի գնում աւագ դստերս՝ Դաֆնիի պսակադրութեան արարողութեան առթիւ, երեխաներս ինձ մի ճիշտ հարց ուղղեցին, որը յուզում էր նրանց, եւ այն վերաբերում էր իմ ստուգմանը: Այդ վայրկեանին, եթէ ես խուճապի չմատնելի, բնականաբար նրանք էլ չէին անհանգստանայ:

Իմ ընկերները ինձ ասացին, որ այդ կարգի առաջարկութիւնը ակելի լաւ կը լինի, որ մեքենայ վարելու ընթացքում արւի, քանի որ վարորդի ու մեքենայի ուղեւորների ուշադրութիւնը միայն կենտրոնանում է ճանապարհի վրայ եւ ճիշտ վարելուն, հետեւաբար ակելի լաւ են ընդունում նման խօսքերը:

Ես էլ յայտնեցի բարոյական անխուսափելի պարտադրանքի առջեւ, որ այդ լուրը յայտնելի հեռուստադիտողներին եւ տեղեկացնելի իմ ստուգման անյաջող արդիւնքի մասին եւ խօսքերիս մէջ հեռուստադիտողներին խրախուսելի, որպէսզի նրանք իրենց առողջութեան համար մանաւանդ հաստ աղիքի տարեկան ստուգումների գնան եւ այդպիսով փրկեն իրենց կեանքը:

Մենք ստացանք մեր հաղորդումների արդիւնքը: Լսեցինք, որ հարիւրաւոր մարդիկ ենթարկւել են ստուգումների եւ նրանցից որոշների մօտ, որոնք ժամանակին կատարել էին իրենց ստուգումները, ախտորոշւել է հիւանդութիւնը: Ես շատ տեղեկութիւններ ստացայ այն մարդկանցից, որոնք ստուգման չէին ենթարկւել, եւ նրանցից, որոնք կատարել էին: Ի վերջոյ, ես պիտի խոստովանեմ, որ ես նրանցից, որ ստուգման էին ենթարկւել որեւէ բան չսովորեցի, այլ սովորեցի նրանցից, ովքեր ստուգման չէին ենթարկւել եւ դժւարութեան էին մատնւել: Դա մի ահագանգ էր այն մարդկանց համար, որ անփոյթ են իրենց առողջութեան նկատմամբ:

Իմ աղիներում եղած բոյսերը խանգարել էր դոկտ. Լափոքի հետազօտութեանը եւ այդ պատճառով նա պնդեց, որ կրկնեմք ստուգումը: Որպէսզի նա կարողանար գտնել կորած պոլիպը ինձ երեք ամիս ժամանակ տւեց՝ «բաց պատուհան» («ժամանակ» *L.U.*), որն մի ընդունւած ժամանակ էր այդ բանի համար: Նա հետեւողակաճորէն պնդեց, եւ հեռախօսով ինձ յիշեցրեց, եւ ստուգման համար ժամ նշանակեց: Ես կրկին անտեսեցի: Նա պարբերաբար ինձ էլեկտրոնային նամակ (իմէյլ) էր ուղարկում, իսկ ես անընդհատ հետաձգում էի: Մի անգամ եւս, երբ ըստ իմ սովորութեան զբաղւած էի աշխատանքով, ինձ շջմեցրեց հիւանդներին հոգատարու-

թիւնը, երբ նրանք այդ հարցից տեղեկացան ինձ ասացին թէ ինչպէ՞ս կարելի է անփոյթ լինել առողջութեան հանդէպ, երբ իրականում մտահոգւելու պատճառներ գոյութիւն ունենին:

Ի վերջոյ 9 ամսից յետոյ ներկայացայ նորից: Ես ինձ գտայ իմ տան մէջ եւ կարդացի կարգադրւած մի մեծ քիմիական դեղերի ցուցակ, որոնք նշանակւել էին ինձ համար: Ես լրջութեամբ ընդունեցի բժշկի տւած կարգադրութիւնները: Դեղերը օգտագործում էի եւ ըստ կարգադրութեան ամէն տասը րոպէն մի մեծ բաժակ

## ՀԱԿԱՔԱՂՅԿԵՂԱՍ



**Բլուբերին անտոսիաններով հարուստ բոյս, որը կարող է դանդաղեցնել ուռուցքի աճը:**



**Սպանախը կատեցնում է DNA-ի անցանկալի փոփոխութիւնները:**

խմում էի առանց որեւէ սխալի: Յաւելեալ դրան ես ընդունեցի լուծողականի դեղահատիկներ, մագնեզիոմ ցիտրատ եւ դրան յաւելած երկու օր էլ ծոն պահեցի: Այլեւս չէի ուզում մի տարւայ ընթացքում իմ հաստ աղիքը երրորդ անգամայ համար ստուգման ենթարկել: Դոկտ. Լափոքը յատկապէս ուշադրութեամբ ստուգեց իմ հաստ աղիքը. նա յաւելեալ ժամ տրամադրեց եւ աղիքիս բոլոր մասերը քննեց: Ի վերջոյ նա աղիքիս ամենադժուար մասում գտաւ մի պոլիպ եւ դա քերթելով աղիքիցս դուրս բերեց: Այնուհետեւ

անզգայացման մշուշի տակ, ինչպէս անցեալ անգամ ես լսեցի նոյն ձայնը: Ստուգման ընթացքում նա գտել էր մի այլ պոլիպ, մի շատ դժուար տեսանելի մասում, որը առաջին պոլիպի հետ համեմատած աւելի անմատչելի մասում էր գտնուում: Ես նարկոզի ազդեցութեան տակ մրթմրթացի, բարեբախտաբար մի անգամ եւս պոլիպն անցաւ ախտորոշման յատուկ ամանի մէջ եւ նորից կրկնեց նոյն զննումը: Հաստ աղիքի ստուգումը մի բացառիկ դրական յատկութիւն էլ ունի, այսինքն՝ հենց այդ ստուգումը կարող է ինքը բուժում լինել, եթէ պոլիպը քաղցկեղային լինի, բայց դեռեւս չի թափանցել աղիքի պատի մէջ: Իմ 10 տարւայ ապրելու շնորհ 72% է: Եթէ քաղցկեղը թափանցել է լիմֆատիկ համակարգի մէջ դրա բուժման հաւանականութիւնը յիսուն-յիսուն է, բայց եթէ այդ քաղցկեղային խոցն աղիքից անցել է մարմնի միւս անդամներին, դրանից ազատելու բախտը 5%-ից էլ աւելի փոքր է, որով հիւանդը կարողանայ տաս տարի ապրել:

Այդ երկրորդ պոլիպը, որն առաջինից աւելի մտահոգեց ինձ, յայտնուեց, որ դա հիպերպլաստիկ եւ ոչ քաղցկեղային նախապոլիպ է: Դա շատ լաւ եւ ուրախալի լուր էր, բայց դրանով հանդերձ ես միշտ պիտի զգոյշ լինեմ եւ հետեւեմ աղիներումս աճած պոլիպներին, եւ դրանով քաղցկեղից մահանալու իմ ռիսկը կը նւագի: Եւ դա շնորհիւ այն բանի, որ ես որոշեցի ժամանակին աղիներս ստուգման ենթարկեցի, եւ մասնագէտների միջոցով առողջութիւնս ապահովագրեցի:

### Աւելի խելօք

Ես ենթադրում եմ, որ աշխարհից երեք տիւր սովորութիւններ պիտի պարտադիր վերացնեն, որպէսզի մարդիկ հաւատքի գան. Առաջինը մեծամտութիւնն է, երկրորդը՝ մերժումը, իսկ երրորդը՝

իրականութիւնն անտեսելը: Դրանք սկզբում փոխեցին իմ հայեացքը քաղցկեղի եւ ապա նրա ստուգման հանդէպ:

Վերջապէս ես ինձ բաւարարած եմ զգում իմ տարեդարձի օրւայ որոշումով ստուգման արդիւնքից, որ ես այդ առթիւ պարծենում եմ:

Ես սովորեցի զրկախառնել անվստահութեան ու սարսափի հետ: Բոլորս էլ փորձեցինք դրանց, քանի որ մենք նկատում ենք, որ մեր կեանքի դիմաց վտանգ է կանգնած եւ մեր առողջութեանն է սպառնում: Հաւանական է, որ ես վախենում էի այդ վատ լուրից, բայց վստահաբար իմ սարսափը այդ վատ լուրից աւելի քիչ կը լինի ուրիշներից, եւ դա մի խթան կը դառնայ, որ ուրիշները կամաւոր կերպով քաղցկեղի ստուգման դիմեն:

Ես վստահօրէն բաւարարւած եմ, ինչ, որ սովորեցի դրանք կը նպաստեն իմ ապագայ աշխատանքին, եւ առանց դրանց հաւանականօրէն հիւանդութիւնն ինձ կը սպառէր:

Ձեզանից շատերը որեւէ տեսակի քաղցկեղի ստուգում չեն կատարել: Ուստի ցանկալի է, որ ինչքան շուտ, թէկուզ հենց հիմա, որ դեռ շատ ուշ չէ, բժշկական ստուգման մի ցուցակ կազմէք, որպէսզի եթէ պիտի մի պոլիպ կամ մի կասկածելի ուռուցք յայտնաբերուի, որքան հնարաւոր է դա շուտ լինի:

Աղբիւր՝ «Թայմ» շաբաթաթերթ  
Յունիս 27, 2011 թ.  
Թարգմանեց՝  
Լեւոն Ահարոնեանը

## ՅԻՆ ՍՆԵՂԱԿԱՐԳ



**Բրակլին պարունակում է այնպիսի տարրեր, որոնք դանդաղեցնում են աղիների քաղցկեղը:**



**Լուիկը պաշտպանում է մարմինը մաշկի քաղցկեղի դէմ:**



# ՄՏՐՈՒԿՆԵՐԸ

## ՉԵՆ ԿԱՌՈՒՅԵԼ ԵԳԻՊՏՈՍԻ ՔՈՒՐԳԵՐԸ

Ե գիպտոսը ցուցադրել է նոր յայտնաբերած դամբարաններ, որոնք ավելի քան 4000 տարեկան են եւ պատկանում են այն մարդկանց, ովքեր աշ-

խատել են Գիզայի Մեծ բուրգերում, ներկայացնելով եւս մէկ ուրիշ ապացոյց, որ ստրուկները չեն կառուցել հինաւուրց յուշարձանները:

Գերեզմանները, որոնք ունեն մօտաւորապէս 9 մետր խորութիւն, իրենց մէջ պարունակում են բաւականին շատ ոսկորներ, որոնք



ըստ հետազոտողների պատկանում են բուրգեր կառուցող բանւորներին:

Յեխ եւ աղիւսից պատրաստւած այս դամբարանները բացայայտել են Գիզայի բուրգերի ներքին բակերից մէկում, որը առաջին անգամ յայտնաբերւել են 1990-ականներին եւ ենթադրուում է, որ դա պատկանում է 4-րդ արքայական դինաստիային: (2575-ից մինչեւ 2467 տարի Քրիստոսի Ծնունդից առաջ):

Հին յոյն պատմաբան Հերոդոտոսը բուրգի շինարարներին նկարագրել է որպէս ստրուկներ, ստեղծելով այն, ինչը եգիպտոսագէտները անւանում են առասպել, եւ որը նաեւ շատ է օգտագործւել հոլիվուդեան ֆիլմերում: Բուրգի շինարարների շիրիմները առաջին անգամ յայտնաբերւել են 1990 թւականին, երբ տարածքում գտնւող մի զբօսաշրջիկ ձիով դիպչում է ինչ-որ պատի, որը հետագայում պարզւել է թէ գերեզման է: Եգիպտոսի հնագիտութեան գլխաւոր տնօրէն Ջահի Հաւասը ասել է, որ այդ յայտնագործութիւնները եւ վերջին նշածը ցոյց են տալիս, որ աշխատողները վճարւել են բանւորների աշխատավարձով, ինչը լրիւ հակառակ է ժողովրդական երեւակայութեանը:

Հաւասը լրագրողների հարցերին պատասխանել է հէնց այն վայրում, որտեղ առաջին անգամ յայտնւել են գերեզմանները, ասելով, որ այս յայտնաբերութիւնները ւաւելի շատ է բացայայտում բուրգի շինարարների կենցաղը եւ նրանց ծագումը: Ամենակարեւորը, նա ասաց, որ աշխատողները չեն հաւաքագրւել ստրուկներից, որոնք եղել են ողջ փարաւոնական շրջանի Եգիպտոսում:

Մի յայտնի առասպել, որը եգիպտոսագէտների մի մասն այն ընդունել է եւ անգամներ ցուցադրւել է հոլիվուդեան ֆիլմերում, ասում է թէ հին հրեայ ստ-

րուկներն են կառուցել բուրգերը:

Երուսաղէմի համալսարանի եբրայական հնագիտութեան ինստիտուտի դասախօս Ամիհայ Մազարը, ասում է, որ այս սխալ առասպելի վրայ պնդում էր նախկին Իսրայէլի վարչապետ Մենախիմ Բեգինը, որը 1977 թ. Եգիպտոս այցելելով, ասաց թէ հրեաներն են կառուցել բուրգերը:

«Ոչ մի հրեայ չի կառուցել բուրգերը, քանի որ այն ժամանակահատուածում, երբ կառուցւել են բուրգերը, հրեաները գոյութիւն չեն ունեցել», - ասել է Մազարը:

Վաշինգտոնեան Biblical Archaeology Review -ի խմբագիր Դորոթի Ռեսիզը ասել է, որ սոյն գաղափարը հաւանաբար առաջացել է Հին Կտակարանի Ելից գրքից, որտեղ ասում է. «Այսպէս եգիպտացիները գերի վերցրեցին Իսրայէլի զաւակներին, նրանց ենթարկելով հիւժոճ աշխատանքների: Այսպիսով Փարաւոնն նրանց ստիպեց կառուցել բուրգերը»:

Եթէ հրեաները կառուցել են որեւէ բան, ապա դա եղել է Բամսես քաղաքը, որը նշած է նաեւ Հին Կտակարանում, - ասել է Մազարը:

Բեռլինի եգիպտական թանգարանի նախկին տնօրէն Դիէտեր Ուիլհոլմզը, ասել է, որ կայ ինչ-որ ընդհանուր գիտելիքներ, որ բուրգերը չեն կառուցւել ո՛չ ստրուկների եւ ո՛չ էլ հին իսրայէլցիների կողմից:

«Այն առասպելը, որ ստրուկներն են բուրգերը կառուցել, դա միայն ինչ-որ միւս է հոլիվուդեան ֆիլմերի համար», պատմել է Ուիլհոլմզը Associated Press-ին: «Աշխարհն ուղղակի չի կարողանում հաւատալ, որ բուրգերը կառուցւել են առանց ճնշման եւ հարկադիր աշխատանքի»:

Հաւասը նշել է. «Շինարարները եղել են աղքատ ընտանիքներից, Եգիպտոսի հիւսիսային եւ հարաւային շրջաններից, եւ յարգւել են իրենց աշխատանքի հա-

մար, այնպէս, որ նրանք, ովքեր մահացել են շինարարութեան ընթացքում թաղւած են հէնց բուրգերի մօտ: Եւ եթէ նրանք ստրուկներ լինէին, ապա նրանց պատուով չէին թաղի», - ասել է նա:

Դամբարանները չեն պարունակում ոչ մի ոսկի կամ արժեքաւոր իր, եւ մարմինները չեն զննւել, իսկ ոսկորները յայտնաբերւել են թաղւած ըստ հին եգիպտական աւանդոյթի՝ գլուխը դէպի արեւմուտք ու ոտքերը դէպի արեւելք:

Այն մարդիկ, ովքեր կառուցում էին բուրգերը կանոնաւոր ուտում էին միս, եւ աշխատում էին երեք ամիս հերթափոխով», - ւաւելացրել է Հաւասը: Իւրաքանչիւր բուրգի կառուցումը տեւել է 10.000 աշխատողների ւաւելի քան 30 տարւայ աշխատանքով:

Հաւասը նշում է թէ այդ 10,000 բանւորները օրական ուտում էին 21 խոշոր եղջերաւոր անասուն եւ 23 ոչխար, որոնք ուղարկւում էին դաշտերից:

«Չմայած, որ բուրգի շինարարները ստրուկ չէին, այնուամենայնիւ նրանք ունեցել են շատ դժւար աշխատանք», - ասել է հնագէտ Ադէլ Օկաշայը:

«Նրանց ոսկորները պատմում են մեզ նրանց ծանր կեանքի մասին», - ւաւելացրել է նա:

Ուիլհոլմզը ասում է. «Այս նոր յայտնաբերութիւնները պնդում են այն գաղափարը, որ բուրգի շինարարները ազատ շարքային քաղաքացիներ են եղել»:

## 43-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԹԵՂԱՆՈՒՄ



Արման Տ. Ստեփանյան

Իրանահայ համայնքի համար, մարզական ամիս է համարուում Սեպտեմբերը, քանի որ արդեն երկար ժամանակ է, ինչ ամեն տարի այդ ամսւայ ընթացքում տեղի են ունենում Իրանի համահայկական խաղերը: Իսկ եթէ դրան գումարենք այս տարւայ Հայաստանում կայացած 5-րդ համահայկական խաղերը, կարող ենք ասել թէ արդէն մօտ մէկ ամիս է, ինչ մեր համայնքը եւ մասնաւորապէս իրանահայ մարզիկները, միութիւնները եւ մարզատէրները ունեցել են շատ եռուն մարզական ամիս:

Այս տարւայ Իրանի համահայկական խաղերը սկսւեց Սեպտեմբերի 13-ին եւ տւեց 9 օր: Անցեալ տարիների սովորութեան համաձայն, խաղերի բացումից առաջ, կիրակի, Սեպտեմբերի 11-ին, «Արարատ» մարզաւանում կայացաւ մամլոյ ասուլիս, ուր լրագրողների հարցերին պատասխանեցին պրն. Համլետ Խալոյեանը, պրն. Արթի Սարգսեանը, պրն. Ժոզեֆ Նազարեանը եւ տկն. Օղէթ Աղաջանեանը: Խօսւեց նաեւ Հայաստանի համահայկական խաղերի ընթացքում Թեհրանի

ծեռք բերած յաջողութիւնների մասին, (5-րդ համահայկական խաղերում, 125 տարբեր քաղաքների մէջ, Թեհրանից ժամանած 160 հոգանոց պատւիրակութիւնը ծեռք բերելով 5 ոսկէ, 1 արծաթ եւ 4 բրոնզէ մեդալներ, Երեւանից յետոյ կանգնեց 2-րդ տեղում):

Այս տարւայ խաղերն ունէր եւս մէկ առանձնայատկութիւն: Ինչպէս բոլորն էլ գիտեն, ամէն տարի այս խաղերը նւիրուում են ինչ-որ համայնքային կամ միջազգային

իրադարձութեան: Ուստի նկատի ունենալով, որ 2011 թւականին լրանում է «Ալիք» օրաթերթի 80-ամեակը (որն ի դէպ պարսկական «Էթթէլաթ» օրաթերթից յետոյ Իրանի ամենահին թերթն է), «Նախիրի» միութեան 30-ամեակը եւ «Արարատ»-ի Սկաուտական միութեան 60-ամեակը, այս տարւայ խաղերը նւիրւել էին այդ երեք կարեւոր իրադարձութիւններին:

Խաղերի բացման արարողութիւնը անցեալ տարիների պէս





կատարեց մեծ շուքով, որն ինչպես միշտ ապացույցն էր իրանահայ համայնքի՝ մարզանքի հանդէպ տածած բարձր սիրոյ եւ խանդավառութեան: Բացման արարողութեանը ներկայ էր նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութեան նորանշանակ սպորտի եւ երիտասարդութեան նախարարը, որը բացումից անմիջապէս յետոյ, տեսնելով «Արարատ» մարզաւանում հաւաքւած հոծ բազմութիւնն ու երկրի տարբեր քաղաքներից ու


միութիւններից ժամանած մարզիկներին, խոստացաւ օժանդակել «Արարատ»-ին, որպէսզի նորից վերականգնի իր ֆուտբոլի հաւաքականը:

Այս տարւայ մրցութիւնների ընթացքում տեղի ունեցան նաեւ ոչ շատ հաճելի դէպքեր: Ինչպէս բոլորն էլ գիտեն այս մրցութիւններում, իրար համար լուրջ հակառակորդներ են համարուում Նոր Ջուղայի եւ Թեհրանի հաւաքականները: Արդէն իսկ քանի տարի է, ինչ

այս երկու հաւաքականների մրցութիւնները լինում են շատ լարւած, բայց շատ գեղեցիկ: Սակայն, ցաւօք սրտի, այս տարի ֆուտբոլի մրցութեան ընթացքում Ն.Ջուղայի Արարատի եւ Սեւանի հաւաքականների միջեւ տեղի ունեցած դէպքերից յետոյ, Ն.Ջուղայի բոլոր մարզիկները հրաժարեցին մրցութիւններից, որով նաեւ չկայացաւ բասկետբոլի եզրափակիչ մրցութիւնը:

Բասկետբոլի եզրափակիչ մրցութիւնը չկայացաւ, քանի որ նախկին օրը տեղի ունեցած անախորժութիւնների պատճառով, Ջուղայի մարզիկները որոշել էին չմասնակցել որեւէ խաղի: Պատկերում Արարատի բասկետբոլի թիմի անդամները սպասում են մրցակցին:





### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 1-Այսպիսին էր Թեհրան-Երեւան չիրականացած թռիչքի աղետը՝ աւիավթարը:
- 2- Հայոց գերագոյն չաստուած - անտառային հատապտուղ - կաշէլ աման:
- 3-Իրօք - գոմ - աջից՝ յարաբերական դերանուն:
- 4-Աջիցէ ցուցական դերանուն - տրանզիտային - բնորոշ է ծխողներին:
- 5- Ծառայ, գերի - բնական պատսպարան ծառերի մէջ - ֆիլէյ:

- 6-Անաւարտ տող- փոքր պարկ - արեւադարձային պտուղ:
- 7-Հռոմէական տներում՝ բակ - ազահօրեն ուտել - ձայնամիշ է:
- 8-Սահմանափակ - որոշւած վճար - իսլամական ծէս:
- 9-Կտրող գործիք - Հայաստանի քաղաքներից:
- 10-Վարագոյրի կամ սփռոցի տեսակ - Բոյս, որի ցօղունից պատրաստում է թել, սերմից՝ ծէք:
- 11-Անձնական դերանուն - ակադեմիա - մոլեգին:
- 12-Ժամանակահատուած - սրոց -

- աջից՝ սագ:
- 13-Արձակ օր - քուղ, մալուխ - խօսք:
- 14-Ազգութիւն՝ միջին Արեւելքում - կենտ- ուզբէլ:
- 15-Հայկական տօներից - ընտանի կենդանու ձագ - յագեցած:

### ՈՒՂԱՅԱՅԵԱՑ

- 1-Երկիր դրախտավայր - տանու, ընտիր:
- 2-Յոյն մեծ իմաստասէր - այսպէս էլ՝ արեւելեան իշխան:
- 3-Սեղացի - ցածից՝ հեզմանք - վաւերական:
- 4-Հայ իշխանական տոհմանուն - ցածից՝ կամարածեւ - երկար հագուստ:
- 5-Շառաւիղ - փնտրէք հովեկների մէջքին:
- 6-Գիւղական պաշտօնեայ - կամայական - գրաբար՝ այսինքն:
- 7-Ներքեւից՝ ցուցական դերանուն - կտրուած պնակ - միջնորդ - առարկայ:
- 8- Ուժեղ արտաշնչել- շանը թոկով կապել:
- 9- Գիտակցական, ըմբռնելու - որոշւած վճար:
- 10-Արական անուն - կապանք - կաթնամթերք:
- 11-Իմաստալից կարճ պատմութիւն - թատրոնային - կրկնութիւնը՝ մայր:
- 12-Քարերով պատած (յատակ) - կրելիք:
- 13-Այգեգործական աշխատանք - գետի ուղին - ոչ իրար նման:
- 14-Իշխող, պետ - նաեւ վիրաւորել:
- 15-Ընկոյզից ու մեղրից պատրաստուող քաղցրաւենիք - վայրի գազան - Ռոբերտ ... ամերիկացի յայտնի գեներալ(1864):

## Անցեալ համարի պատասխանները

5	7	8	1	4	2	6	3	9
2	3	4	6	5	9	1	8	7
6	1	9	3	8	7	5	2	4
7	6	5	2	1	8	4	9	3
9	2	1	4	6	3	7	5	8
4	8	3	7	9	5	2	6	1
1	4	2	9	3	6	8	7	5
8	9	6	5	7	1	3	4	2
3	5	7	8	2	4	9	1	6

1	6	9	7	5	4	3	8	2
3	7	5	2	8	9	1	6	4
8	4	2	1	3	6	7	5	9
6	1	4	3	7	2	5	9	8
9	3	7	8	4	5	6	2	1
2	5	8	9	6	1	4	3	7
5	9	1	4	2	3	8	7	6
7	2	3	6	1	8	9	4	5
4	8	6	5	9	7	2	1	3

5	1	7	8	9	2	4	3	6
3	4	8	6	1	7	9	5	2
9	2	6	3	4	5	8	1	7
4	6	9	7	3	1	5	2	8
7	5	3	2	6	8	1	9	4
1	8	2	9	5	4	7	6	3
6	3	4	1	7	9	2	8	5
2	7	1	5	8	3	6	4	9
8	9	5	4	2	6	3	7	1

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր ՎաճառուՄ է**

«Շիրմարդ»-ի լրագրավաճառի կրպակուՄ  
Նարմկ- անتهای شیرمرد جنوبي  
Հեռախոս՝ 09121836218

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր ՎաճառուՄ է**

«Աշխարաշրջիկ միուքիւՄ»-ուՄ  
خیابان مجیدیه- کوجه نهم- پلاک ۱  
تلفن: ۲۲۵۲۶۴۵۶

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր ՎաճառուՄ է**

«Փասարգադ» Գրախանուք  
بهار، بعد از سه‌روردی- پلاک ۱۱۳  
شهر کتاب پاسارگاد  
تلفن: ۷۷۶۳۱۵۱۶

**«Յոյս» երկշաբաթաբեր ըր ՎաճառուՄ է**

«ԲեթիուքէՄ» Գրախանուք  
خیابان کریم خان زند- سنایی- پلاک ۲۳  
تلفن ۸۸۳۱۳۸۶۸

# Art system



Arthur , Alen , Alex



## خدمات ماشینهای اداری

سرویس و تعمیر چاپگرهای لیزری جوهرافشان HP و سوزنی EPSON

تلفن: ۴-۸۸۳۱۵۳۴۳ و ۷-۸۸۳۲۱۴۳۶

فکس: ۸۸۸۳۳۰۰۰

آدرس: تهران، خیابان ایرانشهرجنوبی، پایین تراز خیابان سمیه،

شماره ۷، طبقه سوم، واحد ۵



## از نگاه دوربین آندرانیک کوچار

دوهفته‌نامه  
اجتماعی فرهنگی

# هووس

شماره ۶، ۱۰۷ مهر ۱۳۹۰  
سال پنجم



## جُلجَتای گورگن ماهاری

صاحب امتیاز و مدیر مسؤول:  
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین

ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وب سایت:

[www.hoos.com](http://www.hoos.com)

وب سایت فارسی:

<http://farsi.hoos.com>

پست الکترونیکی:

[hoos@inbox.com](mailto:hoos@inbox.com)

## در این شماره

- ۲ در صفحات ارمنی این شماره
- ۴ دیدار وزیر امور خاجه ارمنستان از ایران و معادلات منطقه
- ۶ اسکندر مقدونی و ارمنستان  
مُراد اوهانیان
- ۹ آیدا در آینه چگونه خلق شد: فرازهایی از مصاحبه با آیدا سرکیسیان همسر احمد شاملو  
حمید جعفری
- ۱۱ عکاسان ارمنی: آندرانیک کوچار
- ۱۳ هاکوپ مودویان: تلاشگر دوستی کلیساهای مرسلی و انجیلی ارمنه ایران  
هوویک میناسیان

## بخش ارمنی

- ۲ بیستمین سالگرد جمهوری ارمنستان
- ۴ گردهمایی بزرگ اپوزیسیون در ارمنستان  
آنوش ماردیروسیان
- ۵ سخنرانی رئیس جمهور ارمنستان در سازمان ملل
- ۶ مصاحبه نشریه آینده‌نگر با لئون آهارونیان

## جُلجَتای گورگن ماهاری

- ۸ چرا باغستان‌های شعله‌ور را سوزاندند  
روبرت صافاریان
- ۹ خطوط روایی و شخصیت‌های باغستان‌های شعله‌ور
- ۱۰ ملت در برابر نویسنده  
مارک نشانیان
- ۱۱ آخرین گردش بخت ماهاری  
گریگور آجمیان
- ۱۳ بخشی از رمان

- ۱۷ از ترس ابتلا به سرطان چه آموختم  
دکتر محبت از
- ۲۲ اهرام ثلاثه مصر را برده‌ها نساخته‌اند
- ۲۴ بازی‌های ورزشی سراسری ارمنه ایران  
آرمان استپانیان
- ۲۷ سرگرمی



# گوشه‌هایی از آن چه در صفحات ارمنی این شماره هویس آمده است



واقعی .  
 قهرمان اصلی کتاب بازگانی است به نام آوانس آقا، که با انقلابیون دانشک که در شهر فعال هستند میانه خوشی ندارد. دانشک‌ها برای تامین هزینه‌های مبارزات‌شان از بازرگانان پول می‌خواهند و اگر ندهند دست به ترور می‌زنند. آوانس آقا اعتقاد دارد زندگی مهم‌تر از مرگ است در حالی که حرکت‌های انقلابی تکیه‌شان بیشتر بر مرگ خواهی است. با وجود این، از اینکه بچه‌هاش در جنگ مقاومت شرکت می‌کنند به خود می‌بالد. او در گیرودار جنگ مقاومت با زن برادرش روابط عاشقانه دارد. مخالفان کتاب می‌گفتند که ماهاری جنگ آزادی‌بخش را به سُخره گرفته و تصویر زشتی از فعالیت احزاب سیاسی ترسیم کرده است. می‌گفتند به نگاه تاریخ‌نگاری تُرک تن داده است که برابر آن گویی قتل عام ارمنه به خاطر فعالیت‌های انقلابیون ارمنی رخ داده است. دیگر اعتراض مخالفان این بود که ماهاری به تفصیل به عشق یکی دیگر از قهرمانانش با زنی تُرک پرداخته است و یک والی تُرک را شخصیتی لیبرال و مثبت تصویر کرده است.

جدیدی در زندگی ادبی ماهاری شروع شده بود. اما مگر در رمان *باغستان‌های شعله‌ور* چه بود که این گونه خشم افشار گوناگون ملت را برانگیخت؟ خانواده ماهاری اهل وان بودند. شهر وان در ارمنستان غربی (مناطق شرقی ترکیه امروزی) واقع شده بود و مهم‌ترین شهر ارمنی نشین ولایات ارمنی امپراتوری عثمانی بود. در سال ۱۹۱۵، مردم وان، در مقابل یورش نیروهای نظامی ترک و مردم ترک شهر به مقاومت برخاسته بودند و با رسیدن قوای روسیه به شهر توانسته بودند از قتل عام نجات پیدا کنند. اما چند ماه بعد، نیروهای روس تصمیم به عقب‌نشینی گرفته بودند و این به معنای تخلیه شهر بود. خانواده ماهاری هم در میان این مهاجران و متواریان بودند. خود ماهاری آن زمان نوجوانی سیزده ساله بود و بعد از پناهنده شدن به ارمنستان شرقی در یتیم‌خانه بزرگ شده بود. وان با باغستان‌هایش در میان شعله‌های آتش سوخته بود. ماهاری حالا در سن پیری می‌خواست خاطره شهرش را از نیستی نجات دهد. وان دود شده بود و به هوا رفته بود و حالا ماهاری می‌خواست آن را با مردمانش، با باغستان‌هایش، با دعواهای سیاسی و خانوادگی‌اش، با خوب و بدش، در صفحات کتابش دوباره زنده کند. و کرد. اما این وان به مذاق خیلی‌ها خوش نیامد. چون وان واقعی بود با مردم

**جمهوری ارمنستان بیست ساله شد**  
 روز بیست و یکم سپتامبر روز ملی ارمنستان و روز اعلام استقلال جمهوری ارمنستان در سال ۱۹۹۱ است. اقوامی که کم یا بیش به هویت خود آگاهی دارند و این آگاهی در طی سده‌ها دوام آورده است،

**"باغستان‌های شعله‌ور" در شعله‌های آتش**  
